

1(359)

18.01.2014

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՔ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarap

ԱՌՋԵՎՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ

Համաձայն ԼՂՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ հունվարի 20-ից մեկնարկում է ԼՂՀ դպրոցականների 2013-2014 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադան՝ հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու (անգլերեն, գերմաներեն), պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա և նախնական գիմնոզիկական պատրաստություն առարկաների գծով:

Հունվարի 20-31-ը կանցկացվի 1-ին՝ դպրոցական, փետրվարի 12-14-ը՝ 2-րդ՝ շրջանային (քաղաքային), փետրվարի 24-ից մարտի 15-ը՝ 3-րդ՝ հանրապետական փուլը: Օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլին միևնույն դպրոցականին երեք առարկայից մասնակցելու հնարավորություն տալու նպատակով 2-րդ փուլը կանցկացվի հետևյալ ժամանակացույցով:

- հայ գրականություն, ՉԵՊ, օտար լեզու, ֆիզիկա, ինֆորմատիկա առարկաների օլիմպիադաները կանցկացվեն փետրվարի 12-ին:

- հայոց լեզու, մաթեմատիկա, քիմիա, ՆԶՊ առարկաների օլիմպիադաները՝ փետրվարի 13-ին:

- ռուսաց լեզու, պատմություն, աշխարհագրություն, կենսաբանություն առարկաների օլիմպիադաները՝ փետրվարի 14-ին:

Օլիմպիադաների կազմակերպման ու անցկացման համար ստեղծվել է կազմկոմիտե՝ ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանի նախագահությամբ:

Տարեցտարի մեծանում է օլիմպիադայի ինչպես մասնակիցների, այնպես էլ հաղթողների թիվը, ինչը վկայում է գիտելիքների զարգացման, հետևաբար, ուսման որակի բարձրացման ուղղությամբ տարվող նպատակային գործունեության մասին: Տարիների փորձը ցույց է տալիս, որ օլիմպիադայում հաղթում են այն աշակերտները, որոնց ուսուցիչները գիշեր-ցերեկ տրամադրված աշխատում են իրենց սաների հետ: Նման ուսուցիչներն, իհարկե, քաղում են իրենց աշխատանքի քաղցր պտուղները՝ վայելելով իսկական մանկավարժին հատուկ մասնագիտական բերկրանքը:

Օլիմպիադայի հանրապետական՝ 3-րդ փուլում հաղթող մեկնարկած դպրոցականները և նրանց դասավանդող ուսուցիչները պարգևատրվում են նախարարության դիպլոմներով, գովասանագրերով, պատվոգրերով և դրամական պարգևով: Իսկ անցյալ տարի նրանք խրախուսվեցին նաև պետական բարձր մակարդակով՝ արժանանալով ԼՂՀ նախագահի ընդունելությանն ու պարգևատրությանը, որը շարունակական կլինի: Սա մշակում է, որ պետությունը կարևորում է գիտելիքի դերը երկրի կառուցման ու հզորացման գործում:

Օլիմպիադայում հաղթել՝ նշանակում է կյանքում հաջող մեկնարկի սկիզբը դնել: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ օլիմպիադաներում պարբերաբար առաջնակարգ տեղեր գրաված աշակերտները հաջողությամբ հանձնում են նաև միասնական, պետական ավարտական քննություններ, ընդունվում ԼՂՀ և ՀՀ առաջնակարգ բուհեր և դառնում լավ մասնագետներ: Ասել է թե՛ օլիմպիադաներում հաղթած դպրոցականները մեր երկրի վաղվա գիտության և տնտեսության էլիտան են, որոնց հետ կապվում է պետության բարգավաճումն ու հզորացումը:

Հաջողություններ ենք մտաբանում օլիմպիադայի մասնակիցներին:

«ԼՈՒՍԱՐԱՔ»

Բանակ-հասարակություն

ՄԵՐ ՏՈՒՆՆ ՈՒ ՄԵՐ ԱՄՈՑԸ

Հունվարի 15-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի դահլիճում անցկացված միջոցառման ձևաչափը տարբերվում էր մինչ այդ կազմակերպված մասնատիպ միջոցառումներից:

Հրավիրված էին ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը, ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, օրենսդիր և գործադիր իշխանությունների, ՊԲ բարձրաստիճան սպայակազմի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Արցախյան պատերազմի վետերաններ, մանկավարժներ, ուսանողներ, դպրոցականներ:

Երեկոյի մասնակիցները դիտեցին «Լեգենդար Կենտրոնականը» տեսաֆիլմը: Այն պատերազմական տարիներին Ստեփանակերտի կամավորական ստորաբաժանումների հիմքի վրա ձևավորված Կենտրոնական կազմակերպության շրջանի (ԿՊՇ) անցած մարտական ուղու համառոտ ամփոփարձն էր:

Միջոցառման գաղափարական առանցքը հետևյալն էր. ի՞նչ անել, որպեսզի վաղվա հավանական պատերազմում հայրեր կրկին հակառակորդին պարտադիր իր կամքը: Ավելց նաև, որ մենք պարտադրված ենք լինել առավել հզոր, քան երեկ էինք... Իսկ այդ հզորության իրական աղբյուրը բանակ-հասարակությունն է: Սպաստակային փոխգործակցությունն է, որի մասին լավագույնս իր 2014թ. «Բանակը մեր տունն է, մեր ամրոցը» վերտառությամբ տարեմուտի ուղերձում շարադրել է ՀՀ պաշտպանության նախարար, Արցախի հերոս Սեյրան Օհանյանը:

Ուղերձի համառոտ տարբերակը հրապարակեց ԼՂՀ ՊՆ ռազմաօդային ուժերի հրամանատար Կարեն Կարամյանը: Պաշտպանության կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ, գեղարվեստի բարեգլուխ Սուրբառյանը: Պաշտպանության նախարարի ուղերձում մասնավորապես անդրադարձ է արվում մի շարք խնդրահարույց իրողու-



թյունների, որոնք ոչ միայն խոչընդոտում են ծառայությանը, այլև ծնունդ հռչակում են արատավոր բարքեր: «Պետք է դպրոցը, բուհն ու բանակը դարձնել արատավոր երևույթների դեմ պայքարի ամրոց և միասնական պատերազմ հայտարարել փողոցային արատավոր բարքերի դեմ»,- իր ուղերձում ասում է ՀՀ պաշտպանության նախարարը՝ համոզված, որ յուրաքանչյուր հայ ու քաղաքացի հավասարապես մտահոգված է մեր երկրի ապագայով: Պաշտպանության նախարարը խորապես համոզված է. «Հայրենիքի պաշտպանը միայն զինվորն ու սպան չեն... «Հայրենիքի պաշտպան են աշակերտն ու ուսուցիչը, դասախոսն ու ուսանողը, բանվորն ու հողագործը, նա, ում համար հայրենիքն արժեք է: Նորից նա է տանում դրոշը: Բայց միայնակ չի կարող տանել: Որպեսզի երբևէ դառնա հաղթական, նրա հետ պիտի քայլեն բոլորը... Եվ ել է ժամանակը՝ համաժողովրդական միասնության միջոցով հերթական անգամ հասնելու հաղթանակին»:

«Հակադրվելով» պաշտպանության նախարարի տեսակետին՝ միջոցառմանը հրավիրված հասարակայնության ներկայացուցիչները «Հասարակության վերաբերմունքը բանակի հանդեպ պետք է կրի սուկ քննադատական բնույթ, թե նաև գործնական օժանդակության տեսք, եթե այդ, ապա ինչպիսի՞նք...» հարցին ի պատասխան՝

ինչեցին տարաբնույթ մեկնաբանություններ: Մի շարք պատասխաններ էլ ուղեկցվում էին կոնկրետ առաջարկություններով: Իսկ ԼՂՀ պաշտպանական գերատեսչության ղեկավարն էլ նշեց, որ մնա ձևաչափով միջոցառումներն ու երկխոսությունները դարձնելու են շարունակական: Այդ գործընթացում նրա կողմից խիստ կարևորվեցին եկեղեցու ներգրավվածությունն ու դերակատարությունը:

Հարց ու պատասխանի մեջ ներքաշված հասարակայնության ներկայացուցիչները, կիսելով իրենց խոհերը, մտահոգությունները, անելով կառուցողական առաջարկություններ, միաժամանակ պատրաստակամություն հայտնեցին ուժերի ներածին չափով օգնել ու սատարել բանակին, առավելս նպաստել բանակ-հասարակության կապի ամրապնդմանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նոր արժեհամակարգի ձևավորմանը:

Քննարկման առարկա հաջորդ հարցը վերաբերում էր գաղափարապես թրժված և մարտականորեն տրամադրված հերթափոխ պատրաստելու՝ կրթությանը և պատրաստությանը կարևորագույն առաքելությանը:

Այս առնչությամբ ևս պատասխանները միատարր ու միանշանակ չէին: Գաղտնիք չէ, որ հենց ազգային ոգու, ազգային իղձերի պահպանման դարբնոցն է դպրոցը, որտեղ էլ կրթ-

վում ու դաստիարակվում է ապագա զինվորը... Բանակն այն առաջին փորձաքարն է, որին բախվելով, ի հայտ են գալիս կրթության ու դաստիարակության արդյունքները: Եզրահանգումը մեկն էր. բոլոր օղակները պետք է խփեն մեկ կետի ու միշտ լինեն շարքում զինվորի ու բանակի կողքին: Իսկ թե ինչ անելիքներ ունի բանակը հասարակությանը՝ երկրի պաշտպանական համակարգի ամրապնդմանը ներգրավելու առումով, հարցին ի պատասխան՝ հնչեցին բազմաթիվ առաջարկություններ, չըջանցվեցին նաև խորհրդային տարիներից ժառանգածը վերականգնելու որոշ միտումներ:

Հարցուպատասխաններն ընդմիջվում էին ասմունքով ու երաժշտական կատարումներով:

Հայր ժամանակի հարվածներին կարողացել է դիմակայել առաջին հերթին հենց ազգային հանդեպ ունեցած իր հավատարմությամբ: Մենք սիրում ենք խոսել ու հպարտանալ մեր ազգային արժեքներով: Սակայն լինում են դեպքեր, երբ մենք կարծես դավաճանում ենք մեր սկզբունքներին և գայթակղվում օտարների ստեղծածով... Այս համատեքստում ցուցադրվեց «Մի գնեք թուրքական ապրանքներ» տեսառկայան, որի դիտմանը հաջորդեց շահագրգիռ քննարկումը:

Բանակի հզորացման գործում հավատքի դերի ու նշանակության մասին իր նկատառումները կիսեց Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը՝ ներկայացրեցին կոչ անելով գործնալի կապակցությանը, որի դիտմանը հաջորդեց շահագրգիռ քննարկումը:

Բանակի ապագայով մտախոհ յուրաքանչյուր քաղաքացի, համոզված ենք, անկեղծորեն ուզում է մեր երկիրն ու նրա զինված ուժերը տեսնել հզոր ու մարտունակ: Սակայն մի բան է ցանկանալ, այլ բան՝ այն սեփական արարումներով կյանքի կոչել... Հուսով ենք, որ այս համադրված ևս կնպաստի այդ ցանկությունների իրականացմանը:

Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԼՂՀ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՄՏԱԿՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՍԿՈՒՄ Է ՄԻԱՄՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ,

ԼՂՀ ԳՆԱՀԱՏՄԱՆ և թեստավորման կենտրոնի կողմից սույն թվականի փետրվարի 1-ից սկսվում է միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման հաստատությունների (անկախ կազմակերպիչական ձևից) շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Օտար լեզու» (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), «Ստեղծագործական աշխատանք», «Նախնական գիմնոզիկական պատրաստություն» առարկաներից միասնական և կենտրոնացված (2014թ. բուհերի ընդունելության), պետական ավարտական քննությունների կազմակերպման գործընթացը:

Սիսանական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

2013-2014 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտը լրացնում են իրենց ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների շրջանավարտները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները՝ ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնում (հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Մարտունի 97):

Սիսանական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափի լուսանկար,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

- «Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղում Գնահատման և թեստավորման կենտրոնի 22311 008416500 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը՝ կցել դիմում-հայտին:
- Սիսանական և կենտրոնացված քննությունների վճարից ազատվում են հետևյալ դիմորդները՝
- 1-ին և 2-րդ խմբերի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք,
- ՀՀ և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերագրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթերի պատճենները:

12-րդ դասարանների աշակերտները պետական ավարտական քննություններին հայտագրվում են իրենց ուսումնական հաստատություններում:

Դիմում-հայտերի ընդունման և պետական ավարտական քննությունների հայտագրման վերջին ժամկետը՝ 2014թ. փետրվարի 28-ն է:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 97- 40 -51 հեռախոսահամարով:

«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԸՆԹԱՑՔ

ԱՐԵՎԻ ՆՄԱՆ ՍԱՆԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԸ ԶԵՐՄԱՅՆՈՂ ՈՒՄՈՒՑԻՉԸ

Ուսուցիչները, ինչպես գիտության տեղական լուսատուներ, իրենց մասնագիտության գծով պետք է կանգնած լինեն արդի գիտելիքների լիակատար բարձրության վրա:

Դ. Մեմբեյելս

Այս անգամ՝ դեկտեմբերի 6-ին, Ասկերանի շրջափոխման գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանը շրջանի հայոց լեզվի և գրականության սկսնակ 14 ուսուցիչների առաջնորդեց ինսպատի Արթուր Չախապետյանի անվան միջնակարգ դպրոց: Այս ուսումնական տարվա սկզբից նրա նախաձեռնությամբ կազմակերպված ընդօրինակման դասերը հետապնդում են մեկ նպատակ՝ լրացնել այն բացը, որ այսօր առկա է բարձրագույն ուսումնական հաստատությունում. ուսանողն ավարտում է մանկավարժական ինստիտուտը որոշակի գիտելիքներով, բայց անպատրաստ դպրոց մտնելու: Ամբողջ ուսումնառության ընթացքում կազմակերպվող մեկ-երկու փորձառուցումը շատ քիչ է ապագայում ինքնավստահ մանկավարժական գործունեություն ծավալելու համար: Իսկ ընդօրինակման դասերը լավագույն ուսուցիչների մոտ ուղեւորաշին են դառնում սկսնակ ուսուցիչների համար:

Ինսպատի դպրոցի տնօրեն, հանրապետության վաստակավոր մանկավարժ Զավեն Բեգլարյանի ուղղությամբ խոսքը յուրատեսակ պատգամ էր երիտասարդ ուսուցիչներին. «Սիրե՛ք ձեր գործը, սիրե՛ք երեխաներին, նրանցից յուրաքանչյուրի համար ձեր սրտի մեջ տեղ հատկացրեք: Դա կլինի ձեր առաջ ծագած բոլոր դժվարությունների հաղթահարման միակ հուսալի, նաև անդամազան միջոցը: Եվ երկրորդ՝ մշտապես զբաղվե՛ք ինքնակրթությամբ, տիրապետե՛ք ձեր առարկային կատարելապես, միջակությունը դարձրե՛ք տեղ չունի»:

Արտի բոթիռով մտանք հայոց լեզվի և գրականության կաբինետ, ուր և կազմակերպվեց ընդօրինակման դասը հայոց լեզվից՝ 12-րդ դասարանում: Ուսուցչուհին՝ Սուրայա Ղազարյանը, Արցախի ավերակների մանկավարժներից է Տարիներ շա-

րունակ նա եղել է կրթական գործի առաջամարտիկ, նորի ջատագով: Այսօր էլ հիշում են նրա մի հոգվածը թերթում՝ «Կաղը ես եմ ուսուցիչ»: Մեզ համար ուսուցչուհին և՛ ճանապարհի ցույց տվող փարոս է, և՛ բարձունք, որին երազում ենք հասնել: Իր անձնական օրինակով նա մեզ աշխատանքի է մղում: Ամեն անգամ հանդիպելիս (օլիմպիադաներ, ասմունքի և շարադրության մրցույթներ, կոնֆերանսներ) նա խոսում է ոչ թե իր անձնական կյանքի, այլ սաների հաջողությունների մասին: «Ուսուցիչը պետք է ապրի անանձնական կյանքով»,- սիրում է կրկնել Սուրայա Ղազարյանը: Ինքը՝ ուսուցչուհին, վաղուց է ստացել այդ անանձնական ուրախությունն ու երջանկությունը, քանի որ մանկավարժական գործունեության առաջին օրերից է գտել դեպի իր սաների սիրտը տանող ճանապարհը: Նրա սաները, որ կյանքի տարբեր ասպարեզներում իրենց տեղը գտած մարդիկ են, այսօր երախտագիտությամբ են խոսում իրենց ուսուցչուհու մասին:

Դասի թեման էր՝ «Գեղարվեստական ոճ»: Այն սկսվեց յուրօրինակ մուտքով՝ Պ. Սևակի պատգամով. «Խորհել հայերեն, ապրել հայրենի»: Ցույց տալով ուսում, ուսումնական, ուսյալ. ինքնուս բառերի ընդհանուր արմատը՝ ուս, ուսուցչուհին կարևորեց մասնա սերն ու նշանակությունը մարդու կյանքում: Աշակերտներն իրենք էին բերում համապատասխան ասույթները՝ «Գիտունի հետ քար քաշիր», անգետի հետ փլավ մի ուտիր», «Լավ է գիտունին ատելի, քան անգետին» սիրելի»: Իսկ ուսուցչուհին հիշեցրեց Ֆրիկի տաղերից մի ինքնատիպ ու գունեղ պատկեր-համեմատություն.

Անգետն է ի հուր նման,
Ուր ընկնի գտնել կու էր.
Գիտունն է ի ջուր նման,
Ուր երթայ՝ կանաչ բուսեր է...

5-րդ դասարանից առ այսօր աշակերտների հետ կատարած աշխատանքը տվել է զանկալի արդյունք: Ուսուցչուհու ջանքերն իզուր չեն անցել: Լուսինեն, Անահիտը, Անետան, Արգիմեն ներկայացրին գործառնական ոճերը՝ բերելով ինքնուրույն օրինակներ: Գեղարվեստական ոճը բնութագրելիս

Արգիմեն արտասանեց Պ. Սևակի «Նամակ» բանաստեղծությունը: Նրա ասմունքը գերեց ներկաներին: Իսկ որպես տնային աշխատանք հանձնարարված շարադրությունները («Ծով աչքեր», «Կյանքի ոլորակապտույտ ճանապարհներին», «Կռվախնձոր») ինքնատիպ էին և արտացոլում էին աշակերտների ներքնաշխարհի թաքուն էջերը: Ուսուցչուհին 45 րոպեի ընթացքում անդրադարձավ հայոց լեզվի համարյա բոլոր բաժիններին: Գրատախտակին կատարված քարտային աշխատանքները վերաբերում էին գոյականի հոլովմանը, հոգնակի կազմությանը, բարդ ստորագասական նախադասության բնույթին և գծապատկերին, կետադրությանը...

Սուրայա Ղազարյանի ուշադրության կենտրոնում է աշակերտների բառապաշարի հարստացումը: Յուրաքանչյուր դասի նա կատարում է մոտ բառերի համալրում: Այս դասի նորություններն էին *ճոթ, թնջուկ, կախուլ* բառերը:

Դասին յուրահատուկ աշխուժություն հաղորդեց շրջապատների օգտագործումը, որոնց մի մասը ուսուցչուհին ինքն է «հայտնագործել» (համամարդկային հայը-Նարեկացի, ամենահայ հայը-Ս.Արթուրյան, քարապաշտ հայը-Յ.Սահյան, անարյուն ճակատամարտի մեծ գրավար-Ս.Մաշտոց):

Իսկ երբ հանց դասի ավարտն ազդարարող գնացք, ներկաներն ավստանքով ընկալեցին իրողությունը:

Դասի քննարկման ժամանակ ուսուցիչներն ակնածանքի և երախտագիտության խոսքեր էին ուղղում վարպետ ուսուցչուհի Սուրայա Ղազարյանին: Յուրաքանչյուրն ուզում էր նշել, թե ինչ կտանի իր հետ այս դասից:

Անահիտ Գասպարյանը (խնայատ) հպարտանում էր, որ ինքն իր մանկավարժական առաջին քայլերն անում է հենց այս դպրոցում և հնարավորություն ունի աշխատելու ընկեր Ղազարյանի կողքին, ամեն օր լսելու նրա խորհուրդները, նրանից սովորելու:

Նելլի Մարգարյանին (Իվանյան) անչափ հիացրել էր Սուրայա Ղազարյանի ձեռքով ստեղծված կաբինետը՝ յուրօրինակ խորագրերով՝

«Անարյուն ճակատամարտի մեծ գորավարը», «Մեր քաջ նախնիները», «Դարերդ չասեն՝ քարերդ կասեն», խոսքի մասերի վերաբերյալ պատասխաններով, գործերին նվիրված այլոսմներով և նույնիսկ սեպագիր արձանագրությունների նմուշներով: «Սա ոչ թե կաբինետ է, այլ՝ գիտելիքների շտեմարան», - եզրափակեց նա իր խոսքը:

Սուսաննա Գրիգորյանը (Սարգարաշեն) հմայված էր ուսուցչուհու մանկավարժական տակտով: Դասի ընթացքում Սուրայա Ղազարյանն իր տեսադաշտում պահում էր յուրաքանչյուր աշակերտի, թափանցում նրանց հոգու խորքը, վառում հետաքրքրությունների բոլոր ջահերը: Եվ ամենակարևորը՝ խրախուսում ու ոգևորում է աշակերտներին, սխալվելու դեպքում էլ ասում, որ այդ ևս մարդկային է ու բնական:

Իսկ Լարիսա Էլիբեկյանը (Յուսեփավան) անկեղծացավ. «Այս դասից հետո ես ավելի շատ եմ սիրում հայոց լեզուն»:

Սկսնակ ուսուցիչներին հուզում էր այն հարցը, թե ինչպես է Ս. Ղազարյանը կարողացել հասնել այդպիսի արդյունքների, մի՞թե իրենք էլ կարող են գիտական այդպիսի մակարդակ ունենալ: «Գաղտնիքը» բացահայտեց ընկեր Ղազարյանը. «Ես ամեն օր որոնումների մեջ եմ: Ուզում եմ այնպես անել, որ իմ ոչ մի դասը նման չլինի մյուսին, աշակերտները չձանձրանան և անհամբերությամբ սպասեն ինձ: Միաժամանակ խստապահանջ եմ: Աշակերտները ևս պիտի արդարացնեն իմ ակնկալները: Իմ ուրախությունը աշխատանքի մեջ է: Այն ինձ համար անհատականության և ձիրքի արտահայտության հիմնական ձև է: Երբ ես տեսնում եմ իմ աշակերտների հրավառված աչքերը, նրանց ինքնամոռաց ոգևորությունը, անպատեղի երջանիկ եմ զգում: Քիչ է ասել՝ ես սիրում եմ իմ գործը, ես «հիվանդ եմ» իմ գործով...»:

Կամելյա ՄԵԼՔՈՒՅԱՆ
Նորագյուլի Վ. Պեղրոսյանի
անվան միջն. դպրոցի
հ. լեզվի և գրակ.
ուսուցչուհի

ԱՃԻԱՐԿԻ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցն ունի լավագույն ավանդույթներ. այստեղ հաճախակի են կազմակերպվում տարբեր բնույթի միջոցառումներ, հանդիպումներ: Ամանորի նախաշեմին անցկացված միջոցառումը նվիրված էր դպրոցի շրջանավարտներ, սամբոյի աշխարհի չեմպիոններ Աշոտ Դանիելյանին և Մավր Նասիբյանին: Իսկական տոն էր դպրոցում, որտեղ



հպարտությամբ դիմավորեցին աշխարհի չեմպիոններին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ միջոցառման կազմակերպիչ՝ ՄԿԱԳՏՏ Լենա Ղազարյանը՝ հակիրճ ներկայացնելով չեմպիոնների հաջողություններն ու հաղթանակները:

Սանկտ-Պետերբուրգ քաղաքում ավարտված սամբոյի աշխարհի առաջնության 82 կգ քաշային կարգում գերազանց հանդես եկավ Աշոտ Դանիելյանը: Հաղթելով բոլոր գոտեմարտերը՝ նա հասավ եզրափակիչ, ուր առավելության հասավ նաև ռուսաստանցի Ռյաբովի նկատմամբ՝ կրկնելով 2010թ. իր արդյունքն ու երկրորդ անգամ հռչակվելով սամբոյի աշխարհի չեմպիոն՝ նվաճելով ոսկե մեդալ:

Սամբոյի աշխարհի առաջնության 74 կգ քաշային կարգում փայլուն հանդես եկավ և Մավր Նասիբյանը՝ արժանանալով բրոնզե մեդալի:

Դպրոցի սաներն ասմունքով ու երգով, սրտից բխած երախտագիտության խոսք ասացին՝ երդվելով գիտելիքներով ու կարողություններով ծառայել ազգին ու հայրենիքին, սրբությանը պաշտպանելու ազատ և անկախ Արցախը:

Պարգապես հիանում ես, երբ մեր երիտասարդ հանրապետության ձեռքբերումների շարքում առանձնանում է մեր նոր աճող սերունդը՝ նոր մտածողությամբ ու ազգային արժանապատվությամբ:

Մեծ բավականություն և հուզումնառաջացրեց այն, երբ շնորհակալական խոսքով հանդես եկան օրվա հերոսները, առավել ևս՝ նրանց ծնողները: Արաքսյա Դանիելյանը, զսպելով ուրախության արցունքները, իր հերթին շնորհակալություն հայտնեց և պատմեց իր սպասումների մասին՝ մրցույթից առաջ և հետո:

Միջոցառումը բարձր գնահատեց դպրոցի տնօրեն Ռ. Դադայանը՝ չեմպիոններին մաղթելով քաջառողջություն, համառ ու անկտրում կամք:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ՝ ՀՈՒՍԱԿ ՌԵԶԵՐՎ

Արցախի ազատամարտիկների միությունը արդեն կայացած հասարակական կազմակերպություն է, որի հիմնական նպատակը Արցախի գոյապայքարի մասնակիցների սխրագործությունների բացահայտումն է, այն ըստ արժանվույն գնահատելը: Կազմակերպությունը միաժամանակ հոգ է տանում զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու ուղղությամբ: Տոն օրերի կապակցությամբ ազատամարտիկների միությունը հաճախ է նախաձեռնում զանազան միջոցառումներ: Արդեն ավանդական է դառնում Ամանորի և Սուրբ Ծննդի տոների կապակցությամբ Մարտունու տարածքային կազմակերպության միջոցառումը համայնքային կազմակերպությունների նախագահների մասնակցությամբ:

Աշխույժ մթնոլորտում կազմակերպված ինքնատիպ կլոր սեղան էր դա, որտեղ ազատամարտիկների համայնքային կազմակերպության նախագահները կարծիքներ էին փոխանակում, վերհիշում իրենց անցած մարտական փառավոր ուղին, դրվագներ պատմում իրենց մարտընկերների կատարած սխրագործությունների մասին, նրանց մասին, ովքեր եղան նահատակ, ում արյան գնով հայրենիքը փշոցեց Արդեշահից կախվածության կապանքները: Նրանք միաժամանակ չորջանցեցին հոգսերն ու

անելիքները: Առաջարկություններ էին անում համայնքային կազմակերպությունների աշխատանքները ժամանակին համահունչ դարձնելու ուղղությամբ: Ես ավելի քան հանդգնած եմ, որ այս տղաները, չնայած իրենց տարիքն ավելացրել են շուրջ քառորդ դար, բայց տակալին մնում են կրողի, քաջասիրտ՝ լցված երիտասարդական ավելունով և պատրաստ՝ անհրաժեշտության դեպքում վերստին գործել թշնամու դիրքերը՝ իրենց հետևից տանելով այն գորական ուժը, որ այսօր մեր փառապանծ բանակն է ներկայացնում:

- Այո, մենք ունենք հզոր, մարտունակ բանակ,- Ամանորի իր շնորհավորանքի խոսքում սասց Մարտունու տարածքային միավորման նախագահ Ա. Երեմյանը,- բայց դուք ձեր հաստատակամությամբ, մարտական փորձով, անկտրում կամքով, անպարտելի ոգով կդառնաք այն անխոցելի թիկունքը, որին վստահորեն կարող է հենվել երիտասարդ զինվորը, դուք այն բուրան եք, որից պիտի ջերմանա մեր նորակազմի զինվորը: Համոզված եմ, որ հենց մենք պետք է համալրենք արագ արձագանքման ջուրկատների շարքերը: Կասկածից դուրս է, որ ձեր ներկայությամբ զինվորն ավելի պաշտպանված և ավելի համարձակ կզգա:

Ուշագրավ էր, որ ԱԱՄ համայնքային նախագահները պատրաստակամություն հայտնեցին

լինել դիրքերում, քաջալերել դիրքապահներին՝ հնարավոր ստորանքները կանխելու, արժանի հակահարված տալու համար: Դիրքապահներին պատմել իրենց անցած մարտական գործողությունների մասին, անել ամենը, որ դիրքապահ զինվորը վստահ զգա իրեն: Համոզվել, որ թշնամին, հակառակ հոխորտանքների, այնքան էլ սարսափելի ու վտանգավոր չէ, առավել ևս, որ նրանց սրտում բույն է դրել պարտվողի կուչ եկած ոգին: Նրանք միաժամանակ պարտավորվեցին միջնորդ օղակ լինել դպրոց-բանակ-հասարակություն կապն ամրապնդելու համար: Դպրոցներում կազմակերպել հայրենասիրական դաստիարակությանը նպաստող, օժանդակող միջոցառումներ, դպրոցական կուլտուրիներում պատմել բանակաշինության, Արցախյան պատերազմի հերոսների մասին:

2013-ը հիշարժան տարեթիվ էր մեր ժողովրդի համար. համայն հայությունը նշեց Արցախյան գոյապայքարի 25 տարին, իսկ այդ պայքարում անուրանալի է ազատամարտիկներից յուրաքանչյուրի ներդրումը: Միջոցառման մասնակիցները հույս հայտնեցին, որ 2014 թվականը կլինի ազատամարտիկների սոցիալական վիճակի բարելավման տարի:

Լեոն ԱՌԱԲԵԼՅԱՆ
ԱԱՄ Եմիշահի համայնքային
կազմակերպության նախագահ

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐԻԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՄ

Հայտնի է, որ հասարակությունը ստեղծում է իր բնույթի ու սոցիալական զարգացումներին համապատասխան կրթական համակարգ, և կրթության մեջ արտացոլվում են տվյալ պատմական ժամանակաշրջանի հասարակության հիմնախնդիրները:

Արցախի, ինչպես նաև Հայաստանի, Ռուսաստանի, արտասահմանյան շատ դպրոցներ ունեն բավականին հիմնախնդիրներ:

Արցախում, ճիշտ է, բարվոք է դպրոցի նյութատեխնիկական բազան, բայց կան հանգամանքներ, որոնք լուրջ խոչընդոտներ են կրթական բարեփոխումների իրականացման ճանապարհին: Դրանցից կարևորում ենք՝

- նախադպրոցական հաստատությունների քիչ լինելը,
- կրթության բովանդակային նորմատիվային փաստաթղթերի ամենամյա փոփոխությունները,
- համակարգի դասարանների առկայությունը,
- բուհերում մանկավարժական կադրերի որակավորումը (մանկավարժական կրթությունը դարձել է «ոչ էլիտար»):

Այսօր՝ դեպի տեղեկատվական հասարակություն անցման այս փուլում, անչափ կարևորվում է կրթական քաղաքականության ճշգրտման ու մշակման խնդիրը: Խնդիր, որի լուծման ճանապարհին ստեղծվում են կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ու կատարելագործման բազմաթիվ ձևեր ու մոդելներ, ինտենսիվորեն զարգանում են բազմաթիվ կրթական տեխնոլոգիաներ և ուղղություններ, որոնց դրույթների կիրառությունը դպրոցներում անհրաժեշտություն է:

Մենք ուզում ենք ուշադրություն դարձնել Արցախի հանրակրթական դպրոցներում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, մանկավարժի լիակատար (ամբողջական) գիտելիքների յուրացման տեխնոլոգիայի կիրառման գործընթացին:

Այս տեխնոլոգիայի հեղինակներն են ամերիկացի գիտնական-մանկավարժներ Ջ. Քերոլը և Բ. Բլումը: Ռուսական մանկավարժության մեջ դրա հանգամանակից նկարագրությունը տալիս է Մ.Վ. Կլարինը: Այս տեխնոլոգիան ավանդականից (դաս-դասարանային համակարգից) տարբերվում է իր վերջնարդյունքով: Դաս-դասարանային համակարգի դեպքում բոլոր սովորողներին միևնույն ժամանակահատվածում կատարելու և յուրացնելու համար տրվում է նյութի նույն բովանդակությունն ու ծավալը: Ստացվում են բավական տարբեր և ոչ միանշանակ արդյունքներ: Սովորողների մի մասը լավ է յուրացնում նյութը, մյուսները՝ վատ, իսկ ոմանք էլ տեղեկության մի մասն ընդհանրապես չեն յուրացնում, այսինքն՝ գիտելիքների յուրացման աստիճանը տարբեր է:

Լիակատար յուրացման տեխնոլոգիան տալիս է բովանդակային նույն նյութը, դրա հետևանքով նախատեսում է նույն կարողությունների և հմտությունների ձեռքբերում, սակայն յուրաքանչյուր դպրոցականի համար նախատեսում է անհատական ժամանակային փուլ, մեթոդներ, ձևեր, աշխատանքային պայմաններ:

Այս տեխնոլոգիայի բնորոշ գիծն ուսուցման պլանավորված արդյունքներն են: Դա լիակատար յուրացման չափանիշն է: Չափանիշը տրվում է ընդհանրացված, միավորված տեսքով՝ նպատակների աստիճանակարգի օգնությամբ, այսինքն՝ մանկավարժական նպատակների փոխկապակցված աստիճանավորման սկզբունքով, որոնք մշակված են մտածողական, զգայական և հոգեշարժողական ոլորտների համար:

Ուսուցիչը պարտավոր է սովորողներին հասցնել ուսումնական նյութի բովանդակության պլանավորված ցուցանիշները: Նա որոշում է նախատեսվող գործունեության նպատակները, որոշակի գործողություններ և գործառնությունները, որոնք պիտի իրականացնի սովորողը, որ հասնի չափանիշին: Ես-նաչողական գործունեության նպատակները վերաբերում են՝

Ես-նաչողական գործունեության նպատակները վերաբերում են՝

- գիտելիքին (սովորողը մտապահեց, վերարտադրեց, ճանաչեց),
- ընկալմանը (սովորողը բացատրում է, ցույց է տալիս, մեկնաբանում է),
- կիրառմանը (սովորողը սովորած նյութը կիրառում է որոշակի պայմաններում և նոր իրադրության մեջ),
- ընդհանրացմանը և համակարգմանը (սովորողը ամբողջից առանձնացնում է մասերը, ձևավորում նոր ամբողջություն),
- գնահատմանը (սովորողը որոշում է ուսուցման օբյեկտի նշանակությունն ու արժեքը):

Այս տեխնոլոգիայում ուսումնական նյութի նախապատրաստում ասելով պիտի հասկանալ, որ ուսումնական նյութի ողջ բովանդակությունը բաժանվում է առանձին ուսումնական միավորների (տարբեր հեղինակների մոտ՝ կամ ուսումնական տարբերի, կամ բովանդակային միավորների, կամ փոքր բլոկների): Ուսումնական միավորներն ավարտում իմաստ (իմաստային ամբողջություն) ունեն, ծավալով էլ ընդարձակ չեն՝ 3-6 դասաժամ: Ամեն մի միավորի յուրացումը ստուգվում է հատուկ թեստի (ստուգողական աշխատանք) միջոցով, որը գնահատվում է երկաստիճան համակարգով՝ ստուգված կամ չստուգված: Ուսումնական ամեն մի միավորի համար մշակվում է շտկողական դիտարկի նյութ, որը նախատեսվում է չյուրացածը և բացթողնվածը շտկելու համար: Այս լրացուցիչ նյութերը տարբերվում են նախապես տրվածներից. սրանք սովորողին ընտրության հնարավորություն են տալիս ընկալելու, իմաստավորելու և մտապահելու առավել անհատական միջոցներ և ձևեր: Ամբողջ թեմայի համար մշակվում է լիակատար յուրացման գործունեության չափանիշ: Այսօրինակ աշխատանք կատարելու համար սովորողները նախորդ պետք է որոշակի

պատրաստակամություն ունենան: Սովորողների կողմնորոշումը նպատակ ունի խթանելու դասարանի համատեղ աշխատանքը ուսուցչի հետ պայմանավորվածության համաձայն և բացատրել նման ուսուցման հիմնական սկզբունքները: Թեմայի (ենթաբաժնի, դասընթացի) յուրացման գնահատականը նշվում է ըստ չափանիշի կամ էտալոնի, որը նախորդ տրամադրվել էր աշակերտներին:

Աշխատանքի ընթացքում յուրաքանչյուր սովորողի ուսուցիչը ցույց է տալիս անհրաժեշտ օգնություն, բացատրություններ, ինչպես նաև սատարում և խրախուսում ամեն մեկին առանձին-առանձին: Դժվարանալու դեպքում սովորողին տրվում են այլընտրանքային միջոցներ՝ դրանք հաղթահարելու համար:

Ուսուցչի գործունեությունն այս տեխնոլոգիայի շրջանակներում նախատեսում է հետևյալը՝

- ծանոթություն ուսումնական նպատակներին,
- ուսուցման ընդհանուր պլանի բացատրություն,
- նոր նյութի ներկայացում և շարադրում (կատարվում է ավանդական եղանակով),
- ընթացիկ ստուգման կազմակերպում,
- ընթացիկ արդյունքների գնահատում,
- շտկողական աշխատանք այն սովորողների հետ, ովքեր լիովին չեն յուրացրել նյութը,
- փոխօգնության փոքր խմբերի ձևավորում և կազմակերպում,
- օգնություն ստացած սովորողների կրկնակի թեստավորում:

Նման ձևով աշխատելուց հետո թեստային առաջադրանքով ստուգվում և գնահատվում է ամեն մի աշակերտի կողմից ողջ դասընթացի յուրացումը:

Գիտելիքների ամբողջական յուրացման տեխնոլոգիայի դրույթների կիրառման գործընթացի՝ ստորև ներկայացվածը մշտադիտարկման ենթարկվող արդյունք է:

«Ժողովուրդն իմաստուն է» թեմայի ուսուցում

- 1. «Թագավորը, նազիրը և վեզիրը» - 1 ժամ
- 2. Եզոպոս «Հնարամիտը» - 3 ժամ

- 3. Հովսեփ Ասորի «Երկու աքլոր» - 2 ժամ
- Ընդամենը՝ 21 ժամ, որից ուսուցանվելու է 6 -ը (4 թեմա):
- Դասարանը բաժանվում է 4 խմբի:

ՈՒՍՈՒՑՄԱՆ				
Դաս	առաջին	երկրորդ	երրորդ	չորրորդ
Դաս 1	«Թագավորը, նազիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Դաս 2	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	«Թագավորը, նազիրը և վեզիրը»
Դաս 3	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»	«Թագավորը, նազիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս
Դաս 4	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	«Թագավորը, նազիրը և վեզիրը»	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս
Դաս 5	Ի եզրվածի և այլ բնույթի աշխատանքներ	Ի եզրվածի և այլ բնույթի աշխատանքներ	Ի եզրվածի և այլ բնույթի աշխատանքներ	Ի եզրվածի և այլ բնույթի աշխատանքներ
Դաս 6	Իրադրությունային խաղեր, առակների բնակականացում	Իրադրությունային խաղեր, առակների բնակականացում	Իրադրությունային խաղեր, առակների բնակականացում	Իրադրությունային խաղեր, առակների բնակականացում

Դաս առաջին				
Հարց	«Թագավորը, նազիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
1. Ովքեր էին սոված-ծարավ թափառում անտառում:	Ո՛վ էր Եզոպոսի տերը և որևէ ոչ էր գնացել նա:	Ի՛նչ էր կատարվել կեսօրին ծովափին:	Ի՛նչ էր կատարվել կեսօրին ծովափին:	Ի՛նչ էր կատարվել կեսօրին ծովափին:
2. Ինչի՞ հանդիպեցին նրանք:	Ի՛նչ տեսավ հյուրերից մեկը և ի՛նչ հարցրեց Քասկարային:	Ի՛նչ հարցրեց տվեց Եզոպոսը Քասկարային:	Ի՛նչ հարցրեց տվեց Եզոպոսը Քասկարային:	Ի՛նչ հարցրեց տվեց Եզոպոսը Քասկարային:
3. Ներս մտնելով նրանք ի՛նչ տեսան:	Ի՛նչպե՞ս հոխորտաց Քասկարային:	Ի՛նչպե՞ս դիմեց ժողովրդին Քասկարային:	Ի՛նչպե՞ս դիմեց ժողովրդին Քասկարային:	Ի՛նչպե՞ս դիմեց ժողովրդին Քասկարային:
4. Ի՛նչ արեց թագավորը:	Քասկարային և հյուրեր ինչո՞ւ հանցյալի իրենց մատանները:	Ի՛նչո՞ւ հիացավ ժողովրդը:	Ի՛նչո՞ւ հիացավ ժողովրդը:	Ի՛նչո՞ւ հիացավ ժողովրդը:
5. Ի՛նչպե՞ս և նազիրը բաժանեց ու տեղիքը:	Առավոտյան լվացվելիս ի՛նչո՞ւ զարմացավ Քասկարային:			

6. Ի՛նչ արեց թագավորը:	Ի՛նչ պատասխանեց Եզոպոսը:			
7. Ինչպե՞ս վեզիրը բաժանեց ուտելիքը:	Քասկարային ի՛նչ առաջարկեց Եզոպոսին:			
8. Ի՛նչ հարցրեց թագավորը:				
9. Ի՛նչ պատասխանեց վեզիրը:				

Դաս երկրորդ				
Հարց	«Թագավորը, նազիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Ովքեր է են ատճաղագրության հեղինակները:				
Ի՛նչ միջավայրում է տեղի ունենում դեպքը:				
Ասել հենակետային բառերը և կազմել պլան:				
Ստեղծագործության նպատակները:				
Ստեղծագործության ծովափին:				
Ստեղծագործության հիմնական միտքը:				
Ստեղծագործության և նախադրության:				

Դաս երրորդ				
Հարց	«Թագավորը, նազիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Ինչպե՞ս ծնվեց առակը:				
Ովքեր է են առակի հեղինակները:				

Առակի ո՞ր մասն է ամենակարևորը: Ինչո՞ւ:				
Ինչո՞ւ անհասկանալի կլինի առակի վերջին մասը:				
Պատմի՞ր ըստ կազմված պլանի, առաջին դեմքով:				
Ասել համապատասխան ասածաբանները:				

Դաս չորրորդ				
Հարց	«Թագավորը, նազիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Ի եզրվածի և այլ բնույթի աշխատանքներ				

Դաս հինգերորդ				
Հարց	«Թագավորը, նազիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Իրադրությունային խաղեր, առակների բնակականացում				

Դաս վեցերորդ				
Հարց	«Թագավորը, նազիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Անվտանգում				

ՄԵԹՈԴ

ՀԱՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

Նորությունների ու տեխնոլոգիաների ներկայիս բուռն զարգացումների ոլորաններում դարձրել պարզապես չի կարող անմասն մնալ: Միայն այս առաջընթացի շրջանակներում մեր զգալիորեն դարձրել իրականացում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ հատուկ ծրագրեր, իսկ ավագ դպրոցների դերն այդ առումով նշանակալի է: Հենց ավագ դպրոցների ճիշտ գործունեությամբ է պայմանավորված աշակերտության զգալի մասի ինտեգրումը եվրոպական և համաշխարհային ուսումնական ծրագրերին ու նախագծերին: Այդ է ապացուցում վերջերս Ստեփանավերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի բնագիտական հոսքի 12-րդ դասարանում կայացած անգլերենի դասը «Համակարգչի կարևորությունը մեր կյանքում» թեմայով: Այն կազմակերպել էր 16-ամյա մանկավարժական փորձով անգլերենի ուսուցչուհի, դասուցի էլինա Ապրեսյանը:

Բաց դասը մեթոդափոխման նախնական պլանի շրջանակներում էր, համաքաղաքային բնույթի: Ուսուցիչը, ողջունելով աշակերտներին, հաշվառումից և մատյանում գրառումից հետո դասը սկսեց ֆրոնտալ հարցումով: Օգտվելով ինտերակտիվ մեթոդներից և ուսուցման նոր տեխնոլոգիաներից ու ձևերից՝ նա աշակերտներին հնարավորություն տվեց ակտիվ աշխատանքային գործունեության: Տեքստը ճանաչողական, ուսուցողական բնույթի հարցերի միջոցով ամփոփելուց հետո ուսուցչուհին անցավ դասի հարցման: Ընթացքից պարզ դարձավ, որ նախորդ դասին աշակերտներին հանձնարարվել էր թեմայի շուրջ լրացուցիչ նյութեր հավաքել, որով էլ հանդես եկան: Նրանք բավականին խորացել էին թեմայի մեջ, ինչը շատ պարզ երևաց նրանց պատասխաններին:

Այսպես՝ Նոնան դասագրքի թեման լիո-

վին վերլուծելուց զատ, լրացուցիչ հանդես եկավ «The History of Technology» թեմայով: Նա անթերի ու անկաշկանդ խոսում էր անգլերեն: Ապա, որպես լրացում, ուսուցչուհին դասարանին դիմեց ասել նշված տերմինների և հասկացությունների հոմանիշներն ու հակահիշները:

Յանան նույնպես վարժ ու գրագետ անգլերենով ներկայացրեց «Charls Babbage»-ի մասին տեսանյութը՝ ավելի տեսանելի և ուսանելի դարձնելով նյութը:

Այդ ընթացքում դասարանը պասիվ դերում չէր, քանի որ փորձառու և պրպտուն ուսուցչուհին հուշող հարցերով աշակերտներին ներգրաչում էր դասապրոցեսին:

Լուսինեն հանդես եկավ «The Age of Computers» թեմայով: Ենման գրատախտակին գրեց համակարգչի թեր և առավել կողմերը: Իսկ Գայանեն ներկայացրեց «Wikipedia»-ն՝ շեշտելով, որ առավել հարմար է համաշխարհային գրականության և տարբեր թեմաների շուրջ նորություններ իմանալ հենց էլեկտրոնային հանրագիտարանից օգտվելով: Ներկայիս դպրոցականը, քաջածանոթ լինելով այս ամենին, հմտորեն կարողանում է աշխատել համակարգչով, ինչի շնորհիվ էլ դասին շատ մեթոդներ օգտագործվեցին, և առավել շատ նյութերի մասին խոսվեց: Իսկ այս ամենից զատ՝ ուսուցչուհու կողմից նոր նյութն ամփոփվեց բրեյն-ռինգ ինտելեկտուալ խաղով, որտեղ աշակերտները հեշտությամբ գտնում էին առաջադրված հարցերի պատասխանների ճիշտ տարբերակները:

Դիանան համակարգչի օգնությամբ հանգամանակից ու հասկանալի ներկայացրեց «Facebook Registration», այսինքն՝ ինչպես կարող էր դասը «Facebook»-ի անդամ: Գրատախտակը նույնպես խիստ ռացիոնալ օգտագործվեց: Նրա վրա հատուկ վարժությունների միջոցով յուրացվեց

«Pick» թեման՝ ինչպես օգտագործել այն տարբեր պայմաններում (pick at, pick on, pick out...):

Մի քանի աշակերտներ պաստառի վրա ցույց տվին համակարգչի մասերը: Այսինքն՝ անգլերենի իմացությամբ առավել դյուրին կարելի է տիրապետել թե՛ համակարգչին և թե՛ ժամանակակից տեխնոլոգիաներին: Տվյալ դասն ամբողջովին հագեցած էր այն պարզ ու անխուսափելի գաղափարով, որ մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ առանց մեզ հարմարությունների չես կարող զարգացում ապրել, ժամանակի հետ քայլել: Վերջում ուսուցչուհին հանձնարարեց գրել «Technology in my life» թեմայով շարադրություն: Իսկ քանի որ առջևում մնամորն էր, աշակերտները երգեցին «Happy New Year» երգը, որին մի առանձին հնայք հաղորդեց ուսուցչուհու թովիչ ձայնով կատարումը:

Գաղտնիք չէ, որ այսօրվա աշակերտները 20-30 տարի առաջվա երեխաները չեն: Ավելի ճկուն, շրջահայաց ու հետաքրքրասեր են՝ անկախ իրենց ծուլ լինելուց: Բայց ուսուցիչը մնացել է նույնը: Ուսուցիչը՝ այսօրվա ուսուցիչները, շատ բան ունենցնում են: Մենք պետք է շատ կարողանք, որ ուսուցչի ու փնտրողների մեջ լինենք, տիրապետենք ժամանակակից տեխնոլոգիաներին, կառչենք նորություններից: Այս դեպքում միայն կկարողանանք դասը դարձնել նպատակային, իսկ ուսուցումն ու դաստիարակությունը՝ արդյունավետ: Հենց այս գաղափարն է որդեգրել անգլերենի ուսուցչուհի էլինա Ապրեսյանը, և նրա վարժած բաց դասը դրա վառ ապացույցն էր:

Էլլադա ԽԱԶԱՏՐՅԱՆ
Սպեցի. Ա. Սախարովի անվ. հ. 8 ավագ դպրոցի անգլերենի ուսուցչուհի

ԿԵՐՊԱՐԿԵՄՏԻ ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ԽՄ ՓՈՐՁԻՑ

Ազգային դպրոցի կրթադաստիարակական ամբողջ գործընթացի շարժիչն ու ղեկավարն ուսուցիչն է, ով պետք է մշտավառ ոգևորությամբ նվիրված լինի մանկավարժական և հասարակական աշխատանքին: Ինչպես նկատում է գերմանացի մանկավարժ Ռուդոլֆ Շտայները, «Եթե ուսուցիչն ինքը ֆանտաստ չէ, ապա նա չի կարողանա ուղեկցել երեխային բույսերի, կենդանիների, երկրի և աստղերի մասին կախարակական աշխարհը և այդ ամենը հասցնել երեխայի հոգուն հեքիաթի ձևով»:

Ժամանակակից մանկավարժը ժ ո թ լ է յ ա ն կարևորագույն խնդիրն է մատաղ սերնդի գեղագիտական և հայեցողական տիրապետությունը: Կերպարվեստն իր բովանդակության և յուրահատկության շնորհիվ լավագույն կերպով բացահայտում է մարդու և նրան շրջապատող աշխարհի գեղեցկությունը ու ներդրումն ունենում, զարգացնում ճաշակը, ստեղծագործական կարողությունները, ձևավորում բարոյական բարձր չափանիշներ և կոմսերոջներ, ընդլայնում մտախորհրդով, նպաստում սովորողների ինքնաձանգչմանն ու ինքնարտահայտմանը:

Իմ ուսուցման գործընթացում, կախված ծրագրային թեմայից, դասի նպատակից, սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, սովյալ դասի համար ընտրում են ուսումնական գործունեության հետևյալ տեսակները.

- ուսումնական նյութի բացատրում լսարանում,
- ինքնավերլուծություն, գրույցներ,
- արվեստի տարբեր գործերի ուսումնասիրում, ստեղծագործությունների դիտում,
- նկարչական աշխատանքների կատարում,

րում,

- արվեստագիտական գրականության ինքնուրույն ուսումնասիրում, նյութերի մշակում,
- ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործում,
- գանգաժային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն,
- արվեստի հարցերը լուսաբանող դպրոցական ամսագրերի, թերթերի լույսընծայում,
- մրցույթների, ցուցահանդեսների անցկացում,
- ամհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

Ներկայացնեն «Մոխրոտիկը» թեմայի ուսուցումը, որից վերջերս անցկացրի համաքաղաքային բաց դաս: Նպատակս էր զարգացնել աշակերտների ստեղծագործական երևակայությունը միջառարկայական կապի օգնությամբ: Դասին աշակերտները ներկայացան իրենց նկարագրողներով ու էսքիզներով: Առկա էր համապատասխան կահավորումը՝ ջրաներկ, գուաշ, փորձաթղթեր, մանկական նկարազարդ գրքեր, համակարգիչ:

Դասը սկսեցի կազմակերպչական մատով: Ստուգեցի տնային առաջադրանքը, այնուհետև հին նյութն ամփոփեցի հետևյալ հարցերով՝ ի՞նչ է հեքիաթը, սիրո՞ւմ եք հեքիաթներ, քանի՞ տեսակ են լինում հեքիաթները, ինչպե՞ս են սկսվում հեքիաթները և այլն: Աշակերտները պատասխանեցին, որ հեքիաթների մեջ ժողովուրդն արտահայտել է իր նվիրական երազանքները: Հեքիաթները բաժանվում են երեք մեծ խմբի՝ հրաշապատում, կենդանական և իրապատում:

Այնուհետև ավելացրին, որ հեքիաթները սկսվում են «Լինում է, չի լինում», «Կար-

չկար», «ժուկով-ժամանակով» և այլ արտահայտություններով:

Իմ այն հարցին, թե հեքիաթները կարելի՞ է նկարել, աշակերտները սովեցին դրական պատասխան: Հաջորդ հարցին՝ հեքիաթը նկարելու համար ինչ է պետք, երեխաները մեկ-մեկ նշում են՝ էսքիզ, նախնական ճեպանկար, ջրաներկ, գուաշ, վրձիններ, ջուր, ջրաման, լաթի կտորներ, փորձաթղթեր և այլն...

Աշակերտները պարզաբանում են, որ «գուաշ» բառը փոխառություն է ֆրանսերենից և նշանակում է խոնավություն: Ջրաներկն իր անունը ստացել է «aqua» բառից, որ նշանակում է ջուր:

Աշակերտների պարզաբանումներին որոշակի լրացումներ կատարելուց հետո նշում են, որ «ետյուր» ասելով հասկանում ենք ստեղծագործություն, որը կատարվում է նկարչի կողմից բնօրինակի ուսումնասիրության նպատակով:

Ցուցադրում են «Մոխրոտիկը» հեքիաթից հատվածներ սլայդի տարբերակով: Այսօր համախառն ենք կարևորում դասի թատերականացումը: Փոքրիկ բեմականացումը կերպարների դասին օգնում է երեխային ավելի վառ գույներով պատկերացնել իր անելիքը: Ներս են մտնում Արքայազնը և Մոխրոտիկը: Նրանք ներկայացնում են հատված հեքիաթից:

Հետո հեքիաթը բաժանում ենք մասերի, և աշակերտները սկսում են նկարել:

Աշակերտների համար նախօրոք պատրաստված էր նաև խաչքառ, որը լրացնում են դասի ընթացքում: Կիսատ աշխատանքը հանձնարարվում է ավարտել տանը:

Քանի որ նախապես ցուցահանդես էինք կազմակերպել, խոսում ենք նաև Արցախյան հերոսական պայքարի մասին:

Աշակերտները բանաստեղծություններ են ասում,ընթան մեր գողտրիկ լեռնաշխարհի մասին: Իսկ վերջում էռնան և Արայիկն անակնկալ են մատուցում՝ կատարելով «Արցախը թշնամուն չես թողնի» երգը:

Հասնիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սպեցիականների հ. 8 ավագ դպրոցի կերպարվեստի ուսուցչուհի

ՈՒՍԱՆԵԼԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Այս ուսումնականի առաջին կիսամյակը Աշանի միջնակարգ դպրոցում նշանավորվեց հետաքրքիր միջոցառումների շարքով, որոնք նպատակաուղղված էին աշակերտների համակողմանի զարգացմանը, ուսուցմանն ու դաստիարակությանը: «Ուրախ մեկնարկներ», «Ոսկեհամբուրգը», «Արցախյան խճանկար», «Շնորհավոր տոնը, ուսուցիչ», «Հետաքրքիր երկրաչափություն» և այլ մեկը մյուսից հետաքրքիր միջոցառումների շարքը լրացրեց վերջերս աշխարհագրությունից կազմակերպված խաղ-վիկտորինան, որի հեղինակն աշխարհագրության ուսուցչուհի Դ. Ղայանյանն էր: Մրցություն ընդգրկված էին 9-12-րդ դասարանների լավագույն աշակերտները, որոնք կազմել էին «Այսերգ» և «Տոռնադո» թիմերը: Հանդիսությունների դաիվիճ չունենալն էր պատճառ, որ մրցույթը կազմակերպվեց աշխարհագրության կաբինետում: Չնայած դպրոցական լարված առօրյային (կիսամյակային, թեմատիկ աշխատանքներ, ստուգումներ), աշակերտները հասցրել էին նախապատրաստվել: Ծրագրում ընդգրկված էին և դատողական, և ճանաչողական բնույթի բազմազան հարցեր: Խայտաբղետ էր նաև ժյուրիի կազմը՝ պատմության և մաթեմատիկայի ուսուցիչներ, դասավար, կազմակերպիչ, իսկ հաղորդավարն օտար լեզվի ուսուցչուհին էր:

Հենց առավոտվանից օրը լարված սկսվեց: Թիմակիցներն աշխույժ անցուկարձ էին անում, ճշտում վերջին տվյալները, նորից խորհրդակցում: Աթոռորտը տոնական էր, թիմերը մարտական էին՝ հաղթելու տենչով համակված: Միջոցառման սկիզբը մեկնարկեց հաղորդավարի ողջույնի խոսքով, որից հետո թիմերին հնարավորություն տրվեց ներկայացնելու ավագներին և իրենց նշանաբանը: «Տոռնադոն ենք մենք դաժան, ճամփից կըքենք ամեն բան...», «Այսերգն ենք սառն ու անողոք, կկործանենք ձեզ, թե չլինեք խելոք...»:

Միջոցառումը բաղկացած էր վեց փուլից՝ հարց ու պատասխան, ցույց տալ..., աշխատանք ռեբուսներով, տրամաբանական աշխարհագրություն, կատակասեր հանով աշխարհագրություն, ավագների մրցույթ, աշխարհի ամենա-ամենա-ները...

Մի պահ նորին մեծությունը հաջողությունը «վագում էր» մի թիմից մյուսը, լարվածություն էր դրոշմված ոչ միայն «ախտյանների», այլև հանդիսատեսների դեմքին: Ճիշտ պատասխանը մի փուլում ազդարարում էին դրոշակները, մի այլ փուլում՝ սեղանին շարված պատասխանները, մեկ այլ դեպքում՝ աշակերտների օդում ճոճվող ձեռքերը: Դժվար էր նաև ժյուրիի աշխատանքը, որը մինչև վերջ հավատարիմ մնաց անաչառ մնալու իր երդմանը:

Երբ ավագները ներկայացրին Ֆրանսիան և ԱՄՆ-ը, մի պահ աշխարհագրությունը դարձավ կատարյալ ճամփորդություն. բոլորս շրջեցինք ամերիկյան նախագծերում, երանք Ֆրանսիայի տեսարժան վայրերում, համատեսցինք ֆրանսիական նշանավոր գինիները, ամերիկյան հայտնի մակնիշի մեքենաներով եղանք հայաշատ Կալիֆոռնիայում, ակնածանքով սեղմեցինք ամերիկահայ և ֆրանսահայ մեծերի ձեռքը: Մեծ աշխուժություն առաջացրին մանավանդ կատակ-հարցերը՝ ինչպիսի՞ք քարեր չէ հնարավոր գտնել ծովում, ինչպիսի՞ն կլինի Դեղին ծովը ընկած կանաչ թաշկինակը, ո՞րն է ամենաբարակ իրվանդանը, և պտուղ, և թռչուն, ո՞րն է կովկասյան ազգության հարցը, ո՞րն է «բանկիր-երկիրը» և այլն:

Իսկ «Աշխարհի ամենա-ամենա-ներ» փուլը ստուգեց ոչ միայն մրցակիցների, այլև հանդիսատեսների գիտելիքները՝ ամենամեծ լիճը, ամապատը, պետությունը, կղզին, քաղաքը, ամենաբարձր ջրվեժը, ամենաշոր մայրցամաքը, ամենաջրառատ գետը, ամենաարագավաղ կենդանին, ամենաշատ թեյ արտադրող երկիրը և այլն:

Ժյուրիի անդամների համար դժվար էր կողմնորոշվել ուժեղների հարցում, բայց մրցույթը մնում էր մրցույթ և ըստ միավորների, հաղթողի պատվոգրին արժանացավ «Այսերգ» թիմը, իսկ նրա ավագ Հայկ Ղայանյանը բազմակողմանի և գրագետ պատասխանների համար ստացավ հատուկ մրցանակ: Այս հետաքրքիր խաղ-վիկտորինան դարձավ յուրատեսակ և ստուգարք, և՛ փորձնական քննություն աշակերտների համար, ովքեր պապացուցեցին, որ շատ են սիրում աշխարհագրությունը և ունեն իմնավոր ու կայուն գիտելիքներ: Հաղթեց ոչ միայն «Այսերգ» թիմը, հաղթեցին գիտությունը, համերաշխությունը և այն բավականությունը, որ ստացան ներկաներն այս խաղից:

Գոհ էին բոլոր մասնակիցները և լի վճռականությամբ ու պատրաստակամությամբ՝ պլանավորելու մրցույթի նոր փուլ՝ նոր ծրագրով և գաղափարով: Շնորհակալություն հայտնելով Դ. Ղայանյանին՝ բոլորը համակարծիք էին, որ միջոցառումը կազմակերպված էր բարձր մակարդակով և նպատեց աշակերտների մտախորհրդի ընդլայնմանն ու աշխարհամանադրությունը: Այն մեկ անգամ ևս ապացուցեց, որ այն, ինչ երբեմն անհնար է լինում կատարել դասի շրջանակներում, շատ հեշտ է հաջողվում մանա միջոցառումների շնորհիվ, որոնք գիտելիքների ամրապնդման ավելի արդյունավետ միջոց են, քան սովորական դասաժամերը:

Արմինե ԱՎԱՆԵՍՅԱՆ
Աշանի միջն. դպրոցի հ. Լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՅԻՆ

ԷՅԼԵՐԻ ԹԵՈՐԵՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

10-րդ դասարանի բնագիտամաթեմատիկական հոսքի երկրաչափության դասագրքում (Ի.Ֆ.Շարիֆին). «Կանոնավոր բազմանիստեր» թեման անցնելուց հետո աշակերտներին մտա հաճախ հարց և առաջանում. իսկ ինչպե՞ս և ապացուցվում, որ բնության մեջ գոյություն ունեն ճիշտ 5 հաս կանոնավոր բազմանիստեր: Դասագրքում տրվում է թեորեմ 3.1(կանոնավոր բազմանիստերի քանակի մասին), գոյություն ունեն ոչ ավելի, քան հինգ տարբեր տևարի կանոնավոր բազմանիստեր:

Այնուհետև բացատրվում է, որ հինգից ավելի լինել չեն կարող, սակայն թեորեմից դեռ չի բխում (չի ապացուցվում), որ գոյություն ունեն ճիշտ հինգ տևարի կանոնավոր բազմանիստեր:

Այդ բացը լրացնելու համար նպատակահարմար են գտնում տվյալ թեման անցնելու ժամանակ սկզբում ապացուցել Էյլերի թեորեմը, այնուհետև, օգտվելով Էյլերի թեորեմից, ապացուցել 5 կանոնավոր բազմանիստերի առկայությունը: Ես գտնում եմ, որ տրված ապացույցները օգտակար կլինեն ինչպես բնագիտամաթեմատիկական հոսքում սովորող աշակերտների, այդպես էլ այդ դասարաններում դասավանդող ուսուցիչներին:

Թեորեմ: Ցանկացած ուռուցիկ բազմանիստի զագագծերի և նիստերի թվերի գումարը երկուսով մեծ է այդ բազմանիստի կողերի թվից:

Ապացույց: Վերցնենք որևէ ուռուցիկ բազմանիստ, որն ունի α_0 գագաթ, α_1 կող և α_2 նիստ: Հեռացնենք բազմանիստի նիստերից որևէ մեկը, այդ դեպքում նիստերի թիվը կնվազի մեկով, իսկ զագագծերի և կողերի թիվը չի փոխվի: Բավական է ցույց տալ, որ ստացված երկրաչափական պատկերում տեղի ունի

$\alpha_0 - \alpha_1 + \alpha_2 = 1$ հավասարությունը: Ակատենք, որ եթե նիստերից որևէ բազմանկյան մեջ տանենք անկյունագիծ, ապա դրանից $\alpha_0 - \alpha_1 + \alpha_2 = 1$ հավասարությունը չի խախտվի: Իրոք, այդ դեպքում կողերի և նիստերի թիվը կմեծանա մեկով, զագագծերի թիվը կմնա նույնը, հետևաբար, այդ հավասարությունը չի խախտվի: Ուրեմն, առանց ընդհանրությունը խախտելու կարելի է ենթադրել, որ բոլոր նիստերը ծածկված են եռանկյուններով: Այս ընթացքում մեծացավ եռանկյունների թիվը և համապատասխանաբար՝ կողերի թիվը: Դա նշանակում է, որ $\alpha_0 - \alpha_1 + \alpha_2 = 1$ հավասարությունը չի խախտվի նաև հակադարձ գործողության դեպքում, այսինքն՝ եռանկյունները հեռացնելիս: Քայլ առ քայլ հեռացնելով բազմանիստ մակերևույթը ծածկող արտաքին եռանկյունները, ի վերջո կգանք մեկ եռանկյան: Այդ եռանկյան դեպքում $\alpha_0 = 3, \alpha_1 = 3, \alpha_2 = 1$, ուրեմն՝ $\alpha_0 - \alpha_1 + \alpha_2 = 1$: Դա նշանակում է, որ առանց մեկ նիստի բազմանիստ մակերևույթում տեղի ունի նույն հավասարությունը: Վերականգնելով հեռացված նիստը, զալիս ենք Էյլերի բանաձևին:

Թեորեմն ապացուցված է:

Մասնատում: Բազմանիստը կոչվում է կանոնավոր, եթե նրա բոլոր նիստերը կանոնավոր բազմանկյուններ են, յուրաքանչյուր գագաթից դուրս են գալիս միևնույն թվով կողեր, և նրա բոլոր երկնիստ անկյունները իրար հավասար են:

Դա մասնավորապես նշանակում է, որ այդպիսի բազմանիստի յուրաքանչյուր զագագծում միացող կողերի թիվը հաստատուն է:

Ենթադրենք F -ն այդպիսի բազմանիստ է, ընդ որում՝ յուրաքանչյուր նիստն ունի n զագագաթ, իսկ յուրաքանչյուր զագագծում միանում են k կողեր: Քանի որ F բազմանիստի յուրաքանչյուր կողը կապում է երկու հարևան նիստերի ընդհանուր կող է, իսկ յուրաքանչյուր նիստն ունի n զագագաթ և n կող, ուստի, եթե նիստերի թիվը բազմապատկենք յուրաքանչյուր նիստին պատկանող զագագծերի թվով, ապա արդյունքում կստանանք բազմանիստի կողերի կրկնապատիկ թիվը՝ $n\alpha_2 = 2\alpha_1$: Մյուս կողմից, յուրաքանչյուր գագաթը ընդհանուր է կողերի համար, հետևաբար՝ $k\alpha_0 = 2\alpha_1$:

Այստեղից՝
$$\alpha_2 = \frac{2\alpha_1}{n}, \alpha_0 = \frac{2\alpha_1}{k} \quad (1)$$

Կանոնավոր բազմանիստերի համար տեղի ունի Էյլերի թեորեմը, ուրեմն՝



$$\frac{2\alpha_1}{n} - \alpha_1 + \frac{2\alpha_1}{k} = \left(\frac{2}{n} - 1 + \frac{2}{k}\right)\alpha_1 = 2 \quad (2)$$

Պարզ է, որ յուրաքանչյուր նիստի զագագծերի նվազագույն թիվը երեքն է և նույնը ճիշտ է նաև յուրաքանչյուր բազմանիստ անկյան համար՝ $n \geq 3, k \geq 3$: Այստեղից, քանի որ $\frac{2}{n} - 1 + \frac{2}{k} > 0$, ստանում ենք $\frac{2}{n} > 1 - \frac{2}{k} \geq 1 - \frac{2}{3} = \frac{1}{3}$:

Ուրեմն, $n < 6$: Նույն ձևով ստանում ենք, որ $k < 6$: Հետևաբար, n և k թվերը կարող են ընդունել միայն 3,4,5 արժեքները:

Հնարավոր են հետևյալ դեպքերը.

- 1. Եթե $n=3, k=3$, ապա (2) հավասարությունից ստանում ենք $\alpha_1=6$, որտեղից ըստ (1) բանաձևերի գտնում ենք $\alpha_0=12$ և $\alpha_2=4$: Այդ բազմանիստը քառանիստն է (նկ.1):
- 2. Եթե $n=3, k=5$, ապա (2) հավասարությունից ստանում ենք $\alpha_1=30$, որտեղից ըստ (1) բանաձևերի գտնում ենք $\alpha_0=60$ և $\alpha_2=12$: Այդ բազմանիստը կոչվում է իկոսանդր կամ քսանանիստ: Այն ունի 12 զագագաթ (նկ.3):
- 3. Եթե $n=5, k=3$, ապա (2) հավասարությունից ստանում ենք $\alpha_1=30$, որտեղից ըստ (1) բանաձևերի գտնում ենք $\alpha_0=60$ և $\alpha_2=12$: Այդ բազմանիստը կոչվում է դոդեկանդր կամ տասներկուանիստ: Այն ունի 20 գագաթ (նկ.2):
- 4. Եթե $n=3, k=4$, ապա (2) հավասարությունից ստանում ենք $\alpha_1=12$, որտեղից ըստ (1) բանաձևերի գտնում ենք $\alpha_0=24$ և $\alpha_2=6$: Այդ բազմանիստը կոչվում է օկտանդր կամ ութանիստ: Այն ունի 6 զագագաթ (նկ.5):
- 5. Եթե $n=4, k=3$, ապա (2) հավասարությունից ստանում ենք $\alpha_1=12$, որտեղից ըստ (1) բանաձևերի գտնում ենք $\alpha_0=24$ և $\alpha_2=6$: Այդ բազմանիստը կոչվում է հեքսանդր կամ վեցանիստ: Այն ունի 8 զագագաթ (նկ.4):



Մնացած դեպքերը որևէ բազմանիստ չեն որոշում: Օրինակ $n=4, k=5$, ապա (2) հավասարության ձախ մասում փակագծերի արտահայտությունն ընդունում է բացասական արժեք և ուրեմն α_1 թիվը բացասական է, որը հնարավոր չէ:

Այսպիսով, Էվլիդեսյան եռաչափ տարածության մեջ գոյություն ունեն ընդամենը հինգ տեսակի կանոնավոր բազմանիստեր՝ քառանիստ, վեցանիստ, ութանիստ, տասներկուանիստ և քսանանիստ (նկ.1-5):

Վլադիմիր ՓԻՐՈՒՄՅԱՆ
Մարտիկոս 2րդ, Ճարտարի
3.3 արդյունյանի անվան հ. 2 հիմնական
դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ

ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ

ԳԻՏՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏՈ

Գիտության և արվեստի մարդիկ միշտ ապրում են անհասանելի եզրին:

Յուլիոս Ռոբերտ Օպենհեյմեր

Եզակի արվեստագետներ կարող են լինել գիտնականների լաբորատորիաներում, մինչդեռ գիտնականներն ամենօրյա հանդիպումներ են ունենում արվեստի գործերի հետ՝ լինի դա գրականություն, կինո, թատրոն, երաժշտություն, նկարչություն, պար, երգ, գրադարան, պատկերասրահ կամ բանագրամ:

Յուրաքանչյուր գիտաշխատող ունենում է իր սիրած բանաստեղծը, երաժիշտը... և երկրպագուն է նրան:

Փորձե՛ք հիշատակել մի քանի առաջատար գիտնականների, որ տիպական կլինի նաև մյուսների համար:

Այսպես՝ ֆիզիկոս Մաքս Բոռնի շրջապատում ճանաչում էին նաև որպես գրող և առաջնակարգ դաշնակահար: Ֆիզիկայի հետ միասին նա նվիրված էր գրականությանն ու երաժշտությանը: Համալսարանում արվեստի մեջ էր մտնում քաղաքի դաշնակահարների հետ, գրում էր բանաստեղծություններ: Գուցե հենց դա է ստիպել նրա դասախոսներից մեկին դիմել նրան և իմանալ:

Սա տաղանդավոր գիտնական էր, նույնքան տաղանդավոր ու շնորհալի դասախոս, իսկ ականավոր կազմակերպիչ լինելը երևաց, երբ նշանակեցին ստամային ռուբի ստեղծման լաբորատորիայի տնօրեն: Իհարկե, դա սովորական լաբորատորիա չէր, այլ վիթխարի, հրեշավոր գործարանների անվերջության տպավորություն բողոքող գանգված, որի ուղեղային կենտրոնը Լոս Ալամոսն էր, որտեղ Օպենհեյմերի ղեկավարությամբ աշխատում էր գիտնականների էլիտան:

Օպենհեյմերի վրա էր երկու միլիարդ դոլարի պատասխանատվությունը: Նա իր տարերքի մեջ էր և ամբողջությամբ ենթադրում էր, որ այդ ինչը աղբյուրից էր նրա այդ անսպասելի էներգիան: Աղբյուրը Դանթեն էր, 16-րդ և 17-րդ դարերի ֆրանսիական պոեզիան, նրա ամենասիրած բանաստեղծ Պրուստը, Ֆրանսիական գրականության մեծ գիտակ Շլայեն: Օպենհեյմերը, լինելով տաղանդավոր ֆիզիկոս, ժամերով կարող էր գրուցել իր գործընկերների հետ, բայց միայն Շլայենի միջավայրում նա գգում էր, որ ոչ միայն խոսակցությունը, այլև նույնիսկ լռությունը ներթափանցված է պոեզիայի

նկատմամբ կարոտի լուսավոր զգացումով:

Արվեստի զգացողությունն ավելի խորն է արտահայտվել էյնշտեյնի մոտ: Տասնչորս տարեկանում նա ծանոթանում է անտիկ աշխարհի դասական գրականությանը և տարվում նրանով, իսկ 15-ում կյանքը վտանգի ենթարկելով՝ Մյունխենից Գոթարդյան լեռնանցքով մեն-մենակ անցնում է Միլան՝ հիանում անտիկ աշխարհի հուշարձաններով, լինում գրադարաններում ու թանգարաններում: Ավելի ուշ ընթերցում է Դոստոևսկուն, որը մեծ ազդեցություն է թողնում նրա ներաշխարհի զարգացման վրա:

Նա խոնարհվում էր Ֆրիդրիխ Գաուսի առջև, բայց ասում է. «Դոստոևսկին տալիս է ինձ ավելին, քան ցանկացած գիտնական, ավելին, քան Գաուսը: Նա ինձ մեջ առաջացնում է այնպիսի անհարթահարելի էթիկական պոռթկում, ինչպիսին առաջանում է արվեստի իսկական ստեղծագործությունից... Ես ոգևորված եմ կարդում «Կարամազով եղբայրները»: Դա ամենահարաշալի գիրքն է այն բոլորից, ինչ էս երբևիցե ձեռքս եմ վերցրել»:

Յուրահատուկ նվիրվածություն ուներ երաժշտության նկատմամբ: Նրա համար ամենաթանկ գանձը իր ջութակն էր՝ Լիման (ջութակի անունն է), որից անբաժան էր, ուր էլ գնար, տանում էր հետը: Նրա ջութակի երգն ունկնդրելու էր գալիս մեծ բանաստեղծ Ջայնրիկ Ջայնեն: Իսկ ժամանակակիցներից Հանս Բիլանդը գրում է. «...հավաքվում էինք Մոցարտի սոնատները նվագելու: Երբ նրա ջութակը սկսեց երգել, ինձ թվաց, թե սրահի պատերը տեղի տվեցին, ես առաջին անգամ լսեցի իսկական Մոցարտին, ես ընթրեցի նրա երաժշտության ամբողջ հեղինակական գեղեցկությունն ու պարզությունը»:

Մոցարտի և Բախի ստեղծագործությունների նրբությունն ու ներդաշնակությունը մշտապես երջանկությամբ էին լցնում էյնշտեյնի հոգին: Նա ընդմիջում մնաց Բախի ջերմ երկրպագու:

Բարձր էր նրա կատարողական արվեստը: Տալիս էր բարեգործական հաներգներ և հասույթ նվիրաբերում արվեստի օջախների կառուցմանը: Մի այլ անգամ 264 ունկնդիրների համար կատարեց ջութակի համար գրած մի կոնցերտ, և ստացված 6500 դոլար գումարը տվեց օգ-

նելու Գերմանիայից վտարանդատ գիտնականներին:

Միայն ծերությունը ստիպեց թողնել ջութակը, բայց միևնույն է՝ նստեց դաշնամուրի առաջ և նվագում էր նույնը, ինչ ջութակի վրա: Արվեստը գործ էր, հնարավոր չէ նրանից բաժանվել: Վիկտոր Յուզոն ասել է. «Գիտությունը սանդղակ է, պոեզիան՝ թևերի թափահարում: Արվեստագետին և գիտնականին ղեկավարում են միևնույն ներքին մղումները և պահանջում են նրանցից մտքի և գործունեության նույնպիսի հաստակահիշներ»:

Երբ Մոսկվայից Լենինգրադի վրայով պիտի գնային Յելինի՝ Խաղաղության համաշխարհային խորհրդի բյուրոյի հիստին, Ֆրեդերիկ ժոլիո-Կյուրին Լենինգրադում խնդրում է Իյա Էրենբուրգին, որ միասին գնան Երմիտաժ. ցանկանում էր նորից նայել 19-րդ դարի ֆրանսիական գեղանկարչության հավաքածուն: Նա երկար կանգնում, հիանում էր Միսլեյի, Մոնեի, Պիսարոյի բնության պատկերներով, և երբ դուրս եկան, ասաց. «Ես կարծես մի ամբողջ ամառ անցկացրի բնության մեջ»:

Իսկ երբ պառկած էր հիվանդանոցում, կրծքով հենվում էր լուսամտի գոգին ու ետուղներ անում: Տարված էր նկարչությանը, շարունակում էր բնապատկերներ և նատյուրմորտներ նկարել, լսել երաժշտություն:

Գիտության սանդղակի աստիճաններով թևերի թափահարումով է վեր բարձրացել ժոլիո-Կյուրին՝ դառնալով 20-րդ դարի մեծագույն գիտնականներից մեկը:

Իսկ 1949 թվականից մինչև իր մահն իրեն նվիրում է նաև խաղաղության պայքարի գործին՝ դառնալով մեր մոլորակի խաղաղասեր ժողովուրդների ամենապիտանի, հույսն ու հավատը: Ջանքն ու եռանդը չէր խմայում՝ վերջ տալու ատոմային փորձարկումներին:

Ֆրանսիան, մատուցելով իր խոր հարգանքը, մեծ գիտնականի, խաղաղության համաշխարհային խորհրդի նախագահի դազաղը որոշեց Վիկտոր Յուզոնի և Լուի Պաստյորի հուշարձանների միջև՝ միաձուլելով արվեստն ու գիտությունը:

Նունե ՄԵԼՈՒՄՅԱՆ Հաղորդի շրջ., գյուղ Առաջամուղ, արվեստագետ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՎ ԽՆԿԱՐԿՄԱՆ



Կյանքից անժամանակ հեռացավ հայ գրականության երևելի դեմքերից մեկը՝ արձակագիր Լևոն Խեչոյանը: Նրա անունն անխաղճ լիորեն կապված է նաև Արցախի հետ, որովհետև Արցախի համար ամենածանր ժամանակաշրջանում Խեչոյանը, գրիչը փոխարինելով գեներով, կամավորագրվեց մեր ազատամարտին:

Լևոն Խեչոյանը ծնվել է 1955թ. դեկտեմբերի 8-ին, Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի շրջանի Բարալեթ գյուղում:

1983թ. ավարտել է Գյումրիի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը:

Ստեղծագործությունները լույս են տեսել հանրապետական մամուլում, իսկ անդրանիկ ժողովածուն տպագրվել է 1991թ. «խնկի ծառեր» վերնագրով:

Լևոն Խեչոյանի ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, ուկրաիներեն, անգլերեն, իսպաներեն, գերմաներեն և այլ լեզուներով: 1994-ից սկսած՝ տպագրվում է մոսկովյան «Литературная газета» թերթում, «Дружба народов», «Ленга» ամսագրերում: 1998-ին տպագրվել է «Литературная Украина» թերթում:

Լ. Խեչոյանը 1997-ին մասնակցել է Վաշինգտոնում կայացած՝ Ալիայի գրողների համագումարին: «Սև գիրք, ծանր բեզեզ» գրքի համար 1999-ին արժանացել է ՀՀ պետական գրական «Ոսկե եղջերու» մեծ մրցանակի: 2000թ. հունիս-հուլիս ամիսներին մասնակցել է Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ Գերմանիայի Բունդեսբադի կողմից կազմակերպված «Գրական ճեպընթաց Եվրոպա-2000» միջոցառմանը:

Շրջագայել է Եվրոպայի 21 քաղաքներով: Մադրիդում, Փարիզում, Կալինինգրադում, Բեռլինում կարդացել է «Պատերազմը և գրականությունը» զեկուցումը: 2001-ին Բեռլինում գերմաներեն լեզվով լույս է տեսել «Europaexpress» ժողովածուն, որտեղ կա նաև այդ շրջագայության տպավորությամբ գրված «Եվրոպայի երկաթե ճանապարհներին» էսսեն:

2002-ին լույս են տեսել նրա «Տան պահապան հրեշտակը» հեքիաթների և «Հունիսի 5-ը և 6-ը» պատմվածքների ժողովածուները:

2003-ի սեպտեմբերին Բեյրութում լույս է տեսել Լ. Խեչոյանի «Հողի դողը» պատմվածքների ժողովածուն: 2004-ին «Գրական տապան» Եվրոպայի գրողները Հայաստանում ժողովածուում լույս է տեսել «Եվրոպայի երկաթե ճանապարհներին» էսսեն: «Հողի դողը» պատմվածքների ժողովածուի համար 2005-ի փետրվարին նա արժանացել է Հրամոտ Մաթևոսյանի անվան գրական մրցանակին:

2006-ի մարտին լույս է տեսել գրողի «Ձայներ և տեսիլքներ» ընտրանին: 2006-ի սեպտեմբերի 29-ին ստացել է Թեքեան Մշակութային միության «Հայկաչեն Ուզունեան» 2004-2005թթ. գրական մրցանակը՝ «Հունիսի 5-ը և 6-ը» գրքի համար: 2006-ի դեկտեմբերին ստացել է «Նարցիս» գրական-գեղարվեստական մշակութային հանդեսի մրցանակը՝ «Ավագույն արձակ» անվանակարգում:

2008-ի հոկտեմբերին Լոնդոնի «Taderon Press» հրատարակչությունն անգլերեն լույս է ընծայել «Black Book, Weighty Bug» («Սև գիրք, ծանր բեզեզ») վեպը: 2009-ի մայիսին Բուխարեստում ռումիներեն հրատարակվել է «Հայ գրողներ» անթոլոգիան, որի մեջ տեղ է գտել նաև նրա «Ճանապարհորդը» պատմվածքը:

2011-ի ապրիլին «Նահապետ» հրատարակչությունը լույս է ընծայել Լևոն Խեչոյանի «Փուռը, Հայր, Փուռը» պատմվածքների ժողովածուն:

2013 թվականին հրատարակվել է պատմվածքների և հարցազրույցների ժողովածուն՝ Սամվել Սկրտչյանի խմբագրությամբ: Հայ գրականությունը Լևոն Խեչոյանի մահով ծանր կորուստ կրեց, որովհետև մեզանից ընդմիջտ հեռացավ մեծատառով հայը, գրողը, մտավորականը և հայրենիքի նվիրյալ գիմնորդը: Նա միշտ այդպիսին էլ կմնա իր բոլոր գրչընկերների ու բազմաազգար ընթերցողների սրտերում:

Մեծ խնկարկուն ականավոր գրողի հիշատակին:

ԼՂԳ գրողների միության վարչություն

Հանդես

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՂՄԱՆ ԵՐԵԿՈՒՅԹ

Դեկտեմբերի 15-ին Ստեփանակերտի «Ստենդալ» ջազ-ակումբում աշխույժ եռուզեք էր: Քաղաքի հ. 11 ավագ դպրոցի լավագույն սաները անգլերենի ուսուցչուհիների հետ համատեղ կազմակերպեցին մի հրաշալի երեկոյ՝ նվիրված գալիք Նոր տարուն և Սուրբ Ծննդին: Ծրագիրը հազեցած էր, աշակերտները երգեցին, արտասանեցին, կատարեցին փոքրիկ, բայց իմաստալից և բազմախորհուրդ ներկայացումներ, բեմադրեցին գեղեցիկ երկխոսություններ: Եվ այդ ամենը՝ անթերի անգլերենով: Ամեն ինչ արված էր English Christmas party-ն հավուր պատշաճի ներկայացնելու հրավիրված հյուրերին, մայրաքաղաքի բոլոր դպրոցներից ներկա գտնվող անգլերենի ուսուցիչներին, իրենց՝ 11-րդ դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին: Սրահը և բեմը զարդարված էին ամանորի փայլերով, վառվում էր լուսապայծառ տոնածառը: Այդ ամենը

լրացնում էին համապատասխան լուսային էֆեկտները: Միջոցառումը սկսվեց անգլերեն տերմինական աղոթքով, այնուհետև հաղորդավարները ներկայացրին երեկոյի ծրագիրը: Արտասանություններն ընդմիջվում էին պարերով, երգերով, բեմադրություններով: Միջոցառման վերջում շնորհավորանքի խոսք ասացին բազմավաստակ ուսուցիչներ Հասմիկ Սեյրանյանը և Վարդուհի Գաբրիելյանը, շնորհակալություն հայտնեցին, հիրավի, շնորհաշատ և տաղանդավոր աշակերտներին, ովքեր անթերի կատարեցին իրենց դերերը: Մթնոլորտն անգլիական էր՝ հայկական շնչով:

Երեկոյի շարունակվեց աշակերտների աշխույժ պարով, խաղ-մրցույթներով, որոնց, անշուշտ, իրենց մասնակցությունն ունեցան ուսուցիչները: Հաղթողն, ինչ խոսք, նվեր ստացավ Սանտա Կլաուսից: Աշակերտները պարի հրավիրեցին բոլոր ու-

սուցիչներին, դպրոցի տնօրենությանը: Բոլորն էլ սիրով պարեցին: Մթնոլորտն, իրոք, շատ տրամադրող էր:

Ինչ խոսք, պատշաճ աշխատանք տարվում է, ուսուցիչները տքնաջան աշխատում են՝ իրենց սաներին սովորեցնելու, ընդգրկելու նմանօրինակ միջոցառումների՝ այդպիսով մի յուրատեսակ խթան ստեղծելով աշակերտների համար՝ էլ ավելի լավ սովորելու և ուսման մեջ հաջողություններ ունենալու:

Շնորհավորեցե՛ք մեր բոլոր ուսուցիչներին՝ անցած տոների առթիվ, ցանկանանք նրանց առողջություն, եռանդ և համբերություն ուսուցչի ծանր, բայց պատվաբեր գործում այսօրինակ և շատ ու շատ այլ ձեռքբերումների հասնելու համար:

Կարինե ՓԱՅՅԱՆ ԿՊՏ պեպական դեսուչ

ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ-ՆԿԵՐ՝ ՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Բանական մարդու կյանքում շատ բարենասնությունների շարքում մեծ է նաև նվերի և նվիրատվության սովորությունը: Դրանք լինում են թե՛ նյութական և թե՛ հոգևոր: Վերջինիս առումով գործածական է գիրք նվիրելու ծնը, որը շատ կարևոր է բարոյական տեսակետից: Զե՛ որ գիրքը կապող օղակ է նվիրողի և ստացողի միջև, չէ՞ որ նա պնդողակ է ծառայում նույնիսկ մարդկանց միջև եղած խռովությունը հարթելու, անցանկալի ցանկալի դարձնելու, հին ու մոռացված բարեկամությունը վերականգնելու համար: Մարդկային կյանքը այդպիսի շատ օրինակների վրա է: Զուր չէ, որ Կարլ Մարքսը ասում էր՝ «Գրքերը մարդու ստրուկներն են», մեկ ուրիշն էլ թե՛ «Գրքերը մեր բարեկամներն են», իսկ բանաստեղծը ծոնել է. «Գիրք կարդալով դու գրքերում շատ նորանոր բան կհամաս, շատ շատերից շատ բաներում մտքով հեռու կսլանաս...»:

Այս առումով մեծ է և օրինակելի ԼՂՀ-ում շատ մտավորականների գովքին արժանացած վաստակավոր մանկավարժ Միքայել Բեգլարյանի օրինակը, որը վերջին տասնհինգ տարիների ընթացքում հրատարակված իր վեց աշխատությունները, որոնք վերաբերել են մեր կյանքի բազմաբնույթ բնագավառներին, նվիրատվության կարգով ցրել է թե՛ Դարաբաղ աշխարհում և թե՛ արտերկրում:

Ծանոթանալով Արցախի 20-րդ դարի լավագույն մանկավարժի կողմից մարդկանց նվիրած գրքերի աշխարհագրությանը, միաժամանակ ծանոթանում են նրա մարդասիրտության աշխարհագրությանը, այն բանին, թե որքան տարածական է նրա մերձավորությունը մարդկանց հետ: Իմանում, թե ինչքան շատ են նրա մերձավորներն ու բարեկամները, ինչպես լայնահուն է նրա շրջապատը: Հարգարժան մանկավարժը 2013թ. հունիս ամսում «Դիզակ պյուն» հրատարակչությունում լույս ընծայած իր «Աղցալիզմի բուլեթենային տարբերակը և նրա ճակատագիրը» աշխատության տարածումը սկսեց մայրաքաղաքից, այնուհետև նրա նվեր-գրքերը հասան հանրապետության ծայրամասերը, որից ամենից առաջ՝ իր ծննդավայր Քարահունջ գյուղը: 87-ամյա ծերունագարդ մանկավարժի ընծայած գրքերը հասցեագրված են նախ 2013 թվականին գյուղում ծննդաբերած չորս մայրե-

րին՝ Հասմիկ Դանիելյանին, Գոհար Լալայանին, Հասմիկ Մուսայելյանին և Շուշան Բեգլարյանին:

«Շնորհավորանք-նվեր Մ. Բեգլարյան մանկավարժից՝ համապատասխան ճանաչողական հարաբերությունների հիմունքով: Քարահունջ գյուղի բնակչության աճին նպաստելու առումով մի արուզավակ գյուղիս պարզելու համար, ցանկանալով, որ այն կրկնապատկվի և բազմապատկվի: Բարեմաղթանքներով՝ գրքի հեղինակ»:

Իսկ այնուհետև գրքեր նվիրեց 2013-2014 ուստարում 1-ին դասարան ընդունված երեք մանկավարժ ծնողներ Անիտա Մուսայելյանին, Արմինե Դահրամանյանին, Նարա Լալայանին՝ հետևյալ մակագրությամբ՝

«Շնորհավորանք-նվեր Մ. Բեգլարյան վաստակավոր մանկավարժից Նարա Լալայանին, համապատասխան հարսի՛ն՝ Քարահունջի հիմնական դպրոցի աճին նպաստելու նպատակով իր առաջնեկ երեխային դպրոցի 1-ին դասարան ուղեկցելու համար»:

Նա գրքեր է նվիրել իր նախկին լավագույն սաներից Համլետ Գրիգորյանին, Վարյա Թունյանին, Միքայել Առստամյանին, Զորիկ Դուլյանին, Հայաստան Սարգսյանին, Վահագն Գևորգյանին, Սվետա Դուկասյանին և այլոց այս բովանդակությամբ՝

«Նվեր Մ. Բեգլարյան նախկին ուսուցչից՝ Վարյա Թունյանին՝ Մարտունու շրջանային հիմնական դպրոցի երկարամյա բժշկուհուն, իմ նախկին աշակերտուհուն՝ հանուն մարդկանց առողջության պահպանման ուղղությամբ կատարած աշխատանքի և իր գործունեությանը իր նախկին ուսուցիչների հեղինակությունը և պատիվը բարձր պահելու համար»:

Գրքի հեղինակ»:
Հեղինակը գրքեր է շնորհել իր 60-ամյա աշխատակալներ հանդիսացած Խերիսանի, Մուշկապատի, Մաճկալաշենի, Մարտունու, Հերիերի, Սոսի, Քերթի, Քարահունջի դպրոցների ուսուցչական նորոգյա կոլեկտիվներին՝ «Նվեր Մ. Բեգլարյան մանկավարժից Հերիերի միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվին՝ միջնակարգ դպրոցի առաջին շրջանավարտների 55-ամյակի և Ուսուցչի օրվա առթիվ, ցանկանալով, որ շարունակվի այդ դպրոցի նախկին կոլեկտիվների լավագույն ավանդույթները»:

Միջնակարգ դպրոցի հիմնադիր-տնօրեն և գրքի հեղինակ՝ մակագրությամբ:

Նա շնորհավորանքի գիրք է հղել Մաճկալաշենի, Ավետարանոցի, Կուսապատի, Թաղավարդի գյուղերից իր ուսանողական երջանակահիշատակ ընկերներ Ա.Խաչատրյանի, Հ.Միրզոյանի, Ա.Մարտունու, Ռ.Աբախյանի և այլոց հարազատներին:

Զի մոռացել իր վեցերորդ գիրքը հասցնել իր գաղափարակից և գրչակից ընկերներին (Տունի՛ Խ.Ղազարյանին, Մեծ Թաղեր՝ Մ.Բալայանին, Մարտունի՛ Է.Սերգեյանին, Հաղորտի՛ Ա.Գրիգորյանին, Գիշի՛ Ա.Հայրապետյանին, Մարտունի՛ Գ.Սաթևոսյանին, Սոս՝ Ռ.Մուսայելյանին և Հ.Գասպարյանին):

Շնորհաշատ և բեղուն գրչի տեր մանկավարժը առատաձեռն գտնվեց գրքեր նվիրելու ԼՂՀ-ում լույս տեսնող «Լուսարար», «Արցախի կոմունիստ», «Ապառաժ», «Նոր Էջ», «Հայրենիք» թերթերի խմբագրություններին, որոնք մինչև գրքի հրատարակումն իրենց թերթերում ի տես գրքի գալիք ընթերցողների՝ լույս էին ընծայել նրա առանձին հատվածներ:

Նա իր գրքերով նպաստել է հանրապետական և Մարտունու շրջանային գրադարանների գրքային ֆոնդի մեծացմանը:

Մ.Բեգլարյան հեղինակը, ներկա գտնվելով հարազատ գյուղի դպրոցի առաջին գանգի արարողությանը, իր նվեր-գիրքը մատուցեց թոշակի անցնող ուսուցչուհի Ալվինա Գևորգյանին, նույնը և տողերիս հեղինակին, որ նրա տեղը մրցույթի միջոցով նշանակվել էի այդ դպրոցի դասավար:

Այս ամենի մասին գրելով՝ հարգելի ընթերցող, ուզում եմ կոչ անել բոլոր գիրք հեղինակողներին, հատկապես մանկավարժ գործընկերներին, որ ընդօրինակեն մեր մանկավարժ-գործ Մ. Բեգլարյանին, լինեն նրա մեծ մարդանուն և առատաձեռն և որ գլխավորն է՝ գնահատել կարողանան մարդկանց:

Անուշ ԶԱՄԱՆՅԱՆ
Մարտունու շրջանի Քարահունջ գյուղի հիմն. դպրոցի դասավար

ՆԿԵՐՆԵՐ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Քաշաթաղի շրջանի կազմավորման առաջին իսկ օրերից տարածքում սկսեց գործել «Գուրգեն Մելիքյանը՝ Քաշաթաղի բազմազան ընտանիքներին» բարեգործական հիմնադրամը, որը տարիների

օգնություն կարիքավոր և բազմազան ընտանիքներին: Տոնական միջոցառումից հետո բարերարն անձամբ բաժանեց կոշիկները Բերձորի Վ. Թեքչյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի ցածր և միջին դասարանների աշակերտներին:



Իր կատարած հարեմանվեր գործերի համար Գուրգեն Մելիքյանը դարձել է քաշաթաղցիցիների սիրելի բարեկամն ու հարազատը: Նրան հատկապես սիրում են փոքրիկները, և պատահական չէ, որ ասում են Գուրգեն պապի: Նա տեղեկացրեց, որ կոշիկներն ամերիկյան «Թոմս» ընկերությունից ստանալու համար օգնել է «Հայկա-

կան միացյալ հիմնադրամը»: - Ընդհանուր բերել ենք 11070 գույգ կոշիկ՝ 132840 դոլար արժողությամբ: Միայն Քաշաթաղի շրջանին հատկացվել է 1800 գույգ կոշիկ, 7046 գույգ՝ Ստեփանակերտին, 987՝ Շուշիին, 157 գույգ՝ Քարվաճառին, - ասաց Գ. Մելիքյանը:

Նա հայտնեց, որ ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը և Քաշաթաղի շրջապարհակազմը՝ Սուրեն Խաչատրյանի ղեկավարությամբ, մշտապես աջակցում են իրեն բարեգործական ծրագրերն իրականացնելիս: Այդ կապակցությամբ հայտնեց իր երախտագիտությունը և տեղեկացրեց, որ ծրագիրը լինելու է շարունակական:

ԱՄԵՆԱԳԱՑ ՄԵՔԵՆԱՆԵՐ՝ ՀԱՄԱՅՆՔ

Ամանորի նախօրեին Քաշաթաղի շրջանի երեք համայնքներ ԼՂՀ կառավարության կողմից լավ նվեր ստացան՝ «ՌԻԱԶ» ամենագնաց մեքենաներ: Դեկտեմբերի 29-ին շրջվարչակազմի մոտից երեք մեքենաները Ձմեռ պապի և Ձյունանուշի ուղեկցությամբ ուղարկվեցին Ծիծեռնակաճի, Արտաշավի գյուղական և Որոտանի քաղաքային համայնքները: Շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանի հետ մեկնում ենք Որոտան:

Շրջանի չորրորդ քաղաքային համայնքը վերջերս է կազմավորվել: Ձինվորականների բազմախարկ շենքի մոտ Ձմեռ պապին ու Ձյունանուշին սպասում էին քաղաքի երեխաները, որոնցից մոտ 70 հոգի աշակերտներ են և հաճախում են հարևան Հայկազյան գյուղի Հայկազ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց: Սկզբում Ձմեռ պապն ու Ձյունանուշը բաժանում են երեխաների համար նախատեսված նվերները: Մանուկներից շատերը հանդես են գալիս ամունքով, երգով և արժանանում ծափերի ու նվերների: Աման, Արաքյան, Նանեն ու Լիան համադասարանցիներ են. սովորում են 4-րդ դասարանում և միասին են արտասանում: Աղջիկներից առաջին երեքը որոշել են բժիշկ դառնալ, իսկ Լիան, որ ցանկանում է Ձմեռ պապից բարձրահասակ տիկնիկ ու նոթբուք ստանալ՝ վարսահարդար: Առաջին դասարանցի Համլետ Դազյանը հաստատ որոշել է՝ դառնալու է նախարար, նրա քույրը՝ Լիլիթը, ցանկանում է դաշնակահար դառնալ և հպարտ է, որ իրենց հայրը՝ Խաչիկը, մայրը է, գունարտակի հրամանատար: Ավագ լեյտենանտ Մարտիկ Մալունցն ավարտել է Օմսկի ռազմական ինստիտուտը և արդեն չորրորդ տարին է կնոջ՝ Արաքյայի և մեկամյա որդու հետ ապրում է Որոտանում և ծառայում զորամասում: Գոհ են

պայմաններից և մաղթում են, որ 2014-ը լինի հաջողությունների տարի, բոլոր մանուկները լինեն երջանիկ ու առողջ, իսկ հայ գինվորը՝ արի ու հաստատակամ:

Երեխաներից շատերը, ում հետ գրուցեցի, ուզում էին, որ Նոր տարվա գիշերը Ձմեռ պապն իրենց պլանշետ նվիրի: Ներկաներին Ամանորի առթիվ շնորհավորեց շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանը և տեղեկացրեց, որ համայնքին հատկացվել է ավտոմեքենա, որը նվերներով լի, բերել է Ձմեռ պապը: Անձամբ Ձմեռ պապն էլ համայնքի ղեկավար Կոմիտաս Դավթյանին հանձնեց մեքենայի բանալիները՝ մաղթելով, որ անփորձանք ծառայի բնակչությանը: Համայնքի ղեկավարը, որը նախկին գինվորական է, եղել է գունարտակի հրամանատար, շնորհակալություն հայտնեց և շնորհավորեց Սուրբ Ծննդյան և Նոր տարվա տոների առթիվ՝ մաղթելով, որ 2014-ը բերի միայն ու միայն բարիք ու հաջողություն: Համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ քաղաքում կա 230-ից ավելի երեխա, և մանկապարտեզ բացելու ժամանակն է, մասնավորապես երեխաների ծնողները հիմնականում գինվորականներ են, ուսուցիչներ, և երեխաները խնամքի կարիք ունեն: Ինչ վերաբերում է դպրոց ունենալուն, առայժմ զորամասի ավտոբուսները դպրոցականներին և ուսուցիչներին տեղափոխում են Հայկազյանի դպրոց, ուստի առաջնայինը մանկապարտեզն է: Հրաժեշտ ենք տալիս Որոտանին, տեղի լուսերեն, բարի ու նաև միամիտ երեխաներին, հավատում, որ մի օր իսկապես կհայտնվի այն Ձմեռ պապը, ով կկատարի մանուկների բարի ցանկությունը: Հավատում են, որ մեր գինվորներն անառիկ են պահելու երկիր հայրենին:

Հոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆԵՐԻ



Մանկավարժի մասնագիտությունը ի վերուստ տրված շնորհ է, որը մարդ պետք է անմնացորդ ծառայեցնի իր ժողովրդին: Այդ նշանաբանով է առաջնորդվում Ապիտակաշենի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Էլզա Սարգսյանը:

Ստում են՝ յուրաքանչյուր աշխատանք ունի հատուկ, խորհրդավոր վարձատրություն: Կարծում ենք՝ ուսուցչի համար այդ վարձատրությունն ազգի ու հայրենիքի համար դաստիարակած կիրք ու խելացի, հայրենասեր սերունդների երախտագիտությունն է: Կարող ենք համոզված ասել, որ Դուք, սիրելի գործընկեր, լիովին վարձատրված եք:

Շնորհավորում ենք Ձեզ՝ ծննդյան 60-ամյա հոբելյանի կապակցությամբ, մաղթում ամուր առողջություն, անսպառ եռանդ, ընտանեկան ջերմություն և երջանկություն:

Մարտունու շրջանի Սպիտակաշենի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Հունվարի 10-ին լրացավ նրա ծննդյան 60 տարին, որից 40-ը նվիրել է աճող սերնդի կրթմանն ու դաստիարակմանը՝ չորս տասնամյակ շարունակ սաների սեփականությունը դարձնելով Շիրակա-

ՎԵՐՋԻՆ ԷՋ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հարգելի հայրենակիցներ Ամանորյա շնորհավորանքների հետ ընդունեք անկեղծ երախտագիտության խոսքեր Ազգային վիճակախաղի առաջին խաղարկության առթիվ:

Հայտնում ենք, որ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին անցկացված Ազգային վիճակախաղի մասնակցած 261505 տոմսերից վիճակահանության արդյունքում շահել են 342 տոմսեր, որոնց համարները տեղադրված են Ազգային վիճակախաղի պաշտոնական կայք-էջերում՝

www.nkr lottery.com, www.nkr lottery.am: Ազգային առաջին վիճակախաղի խաղարկությանը մասնակցած և շահած տոմս ունե-

ցող հայրենակիցներին խնդրում ենք դիմել՝ - ԼՂՀ-ում՝ ԼՂՀ կառավարություն, ք. Ստեփանակերտ, Փետրվարի 20 հասցեով, հեռ. +374 47 94 12 95

- ՀՀ-ում՝ Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցչություն, ք. Երևան, Ն. Զարյան փող. 17 ա հասցեով, հեռ. +374 10 24 99 28, +374 91 43 73 55, +374 93 70 42 42

- Արտերկրում՝ համապատասխան պետության Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցչություն կամ համագործակցող այլ կառույցներ:

Շահումները կտրամադրվեն կազմակերպվելիք միջոցառման շրջանակներում: Շահումը ստանալու նախանշված օրն

անհրաժեշտ է ներկայանալ շահող տոմսով և անձը հաստատող փաստաթղթով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք գանգել՝ + 374 97 20 70 27, + 374 97 30 37 70 + 374 47 94 12 95

Ինչպես նաև՝ կարող եք Ազգային վիճակախաղի պաշտոնական կայք-էջերում (www.nkr-lottery.com, www.nkr lottery.am) թողնել հաղորդագրություն, Կապեր մասնաբաժնում կամ կապվել մեզ հետ էլեկտրոնային փոստով՝ info@nkr lottery.am հասցեով:

Ազգային պետական վիճակախաղի կազմակերպման հանձնաժողով

Table with 6 columns of lottery numbers (036 001739, 018 001653, 011 005553, 033 001392, 015 002155, 026 000259, etc.)

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՈՑՈՒՅԹ՝ ԼՂՀ ՔՂՇՊԻ ՀՐԶԱՆԻ ՆԵՐՔՈՆՇԱԼ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹՎՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

- 1. Տիրամասկանի մ/դ - դասվար - 1 դր., ռուսաց լեզու - 6 ժամ
2. Իշխանաձորի մ/դ - դասվար - 1 դր., ֆիզկուլտուրա - 12 ժամ, պատմություն - 18 ժամ, հասարակագիտություն - 5 ժամ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 25 ժամ
3. Բազմասուսի մ/դ - դասվար - 1 դր., ֆիզիկա - 5 ժամ, կենսաբանություն - 4 ժամ, քիմիա - 3 ժամ
4. Միրիկի մ/դ - մաթեմատիկա - 22 ժամ
5. Գանձայի մ/դ - ռուսաց լեզու - 10 ժամ
6. Բերձորի թիվ 1 մ/դ - զինղեկ - 1 դր, ՔՊՇՊ /քաղաքատնտեսական շտաբի պետ/ - 0,5 դր.
7. Գետամեջի մ/դ - ֆիզկուլտուրա - 16 ժամ, դասվար - 1 դր.
8. Սիջնավանի մ/դ - զինղեկ - 1 դր, ՔՊՇՊ - 0,5 դր., պատմություն - 23 ժամ, ՀեՊ (Հայոց եկեղեցու պատմություն) - 7 ժամ
9. Աղանուսի մ/դ - օտար լեզու - 8 ժամ, դասվար - 1 դր.
10. Դիցմայրիի հ/դ - դասվար - 1 դր., ռուսաց լեզու - 14 ժամ, հայոց լեզու - 22 ժամ, օտար լեզու - 15 ժամ
11. Երիցվանցի մ/դ - դասվար - 1 դր., հայոց լեզու և գրականություն - 27 ժամ
12. Աղավնատուն հ/դ - զինղեկ - 1 դր, ՔՊՇՊ - 0,5 դր.
13. Սուսի մ/դ - ֆիզկուլտուրա - 6 ժամ, զինղեկ - 1 դր., ՔՊՇՊ - 0,5 դր.
14. Սյենիի մ/դ - պատմություն - 19 ժամ
15. Դազարապատի մ/դ - օտար լեզու - 12 ժամ, ռուսաց լեզու - 12 ժամ
16. Տանձուտի հ/դ - ֆիզիկա, մաթեմատիկա - 15 ժամ, հայոց լեզու և գրականություն - 19 ժամ
17. Ծիծեռնավանցի մ/դ - մաթեմատիկա - 11 ժամ
18. Կովսականի մ/դ - զինղեկ - 1 դր., ՔՊՇՊ 0,5 - դր., պատմություն - 23 ժամ, ՀեՊ - 7 ժամ հասարակագիտություն - 8 ժամ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 15 ժամ, օտար լեզու - 21 ժամ
19. Կունայրիի մ/դ - ռուսաց լեզու - 27 ժամ, օտար լեզու - 10 ժամ
20. Ուռեկանի մ/դ - հայոց լեզու - 28 ժամ, ռուսաց լեզու - 22 ժամ
21. Շալուալի մ/դ - ռուսաց լեզու - 11 ժամ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 9 ժամ, ֆիզիկա - 7 ժամ
22. Դրախտաձորի հ/դ - ռուսաց լեզու - 13 ժամ, օտար լեզու - 8 ժամ
23. Արմավանցի հ/դ - դասվար - 1 դր, զինղեկ - 1 դր, ՔՊՇՊ - 0,5 դր, քիմիա, կենսաբանություն - 11 ժամ
24. Լեռնահովիտ մ/դ - ֆիզկուլտուրա - 12 ժամ
25. Աղավնոյի մ/դ-զինղեկ - 1 դր, ՔՊՇՊ 0,5 դր.
26. Ծոփաձորի մ/դ - զինղեկ 0,5 դր, ՔՊՇՊ 0,3 դր., ռուսաց լեզու - 6 ժամ, դասվար - 1 դր.
27. Քարեգահի մ/դ - ֆիզկուլտուրա - 14 ժամ, դասվար - 1 դր.
28. Վաղազի մ/դ - ֆիզկուլտուրա - 9 ժամ, դասվար - 1 դր.
29. Կուրգավանի մ/դ - մաթեմատիկա - 26 ժամ
30. Հայկազյանի մ/դ - մաթեմատիկա - 10 ժամ
Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. 25-26 համարում և տեղադրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:
Մրցույթի մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիմում) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂՀ արևկան սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև փետրվարի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթները տեղի կունենան փետրվարի 10-14-ն ընկած ժամանակահատվածում: Տեղի, ժամի և այլ տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԻՍՐԱԳԻՐ՝ Ա. ԽԱԶՆՏՐՅԱՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Մտեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպագրման՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 17.01.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: